Առաջարկներ Հայաստանում վայրի բույսերի հավաքի կարգավորման և կառավարման բարելավման գործողությունների օրակարգի համար

Մշակել է՝

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնը և Թայմ Լենդ գիտակրթական հիմնադրամը

Մասնակցությամբ՝

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և մի շարք շահառուների

Պատրաստվել է՝

«Հայաստանում վայրի բույսերի հավաքի կառավարում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է Հայաստանում ԱՄՆ դեսպանության դրամաշնորհի շրջանակներում

Բովանդակություն

Ներածություն 3

Առաջարկներ 4

1. Կենսաբազմազանության մշտադիտարկման և գույքագրման զարգացման համար անհրաժեշտ կարողությունների զարգացում և աքսելերացիա (աճի տեմպի արագացում) 4

2. Խորացնել վայրի բույսերի կայուն հավաքի տնտեսագիտության, արժեշղթայի և արտադրանքի ըմբռնումը 6

3. Վայրի բույսերի հավաքից ստացած ռեսուրսների և արտադրանքի կայուն հավաքի, մշակման և վաճառքի հետ կապված իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների բարելավում 7

4. Վայրի հավաքից մշակման անցնելը 11

5. Խթանել մասնավոր հատվածի նախաձեռնությունները 12

6. Հզորացնելով գյուղական համայնքների կանանց 13

7. Հանրային կրթություն, վերապատրաստում և տարբեր ուղղություններով իրազեկության բարձրացում 15

Հավելվածներ 17

Հավելված 1 18

Հավելված 2 48

Հավելված 3 62

Ներածություն

Վայրի բույսերի հավաքը և օգտագործումը նորույթ չեն Հայաստանում: Բնությանը ապավինելը, շրջակա միջավայրի մասին տեղեկատվություն փոխանցելը՝ որպես ավանդական կյանքի պահպանման ձև, ունեն շատ խորը արմատներ Հայաստանի և Կովկասյան տարածաշրջանի բնակչության շրջանում: Հայաստանի բնակլիմայական պայմանները և դրա հեռակա շրջանների կուսական շրջակա միջավայրը դրական ազդեցություն ունեն հավաքված բնապաշարների որակի վրա, որոնց պահանջարկը մեծ է: Ամբողջ Հայաստանում կա բույսերի և սնկերի մեծ տեսականի, որն օգտագործվում է համայնքների կողմից: Կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում Հայաստանի Հանրապետության ռազմավարությունում և ազգային գործողությունների պլանում (2015) ներկայացվում են.

- ուտելի խոտաբույսեր–մոտավորապես 200 տեսակ,
- վայրի պտղահատապտղատուներ–մոտավորապես 120 տեսակ,
- մեղրատու բույսեր–մոտավորապես 350 տեսակ,
- ուտելի սնկեր–290 տեսակ:

Վերը նշված ցանկը ներառում է նաև բուժիչ և անուշաբույր բույսեր: Հայաստանի Հանրապետության կենսական ռեսուրսների կայուն օգտագործումը երկրի շրջակա միջավայրի և տնտեսական ռազմավարության անբաժանելի և կարևոր մասն է: Բուսական ռեսուրսների, ներառյալ տնտեսապես արժեքավոր, ինչպես նաև ոչնչացման եզրին գտնվող տեսակների շահագործումը Հայաստանի Հանրապետության Կառավարությունը համարում է երկրի կենսաբազմազանության վրա բացասական ազդեցություն ունեցող բազում գործոններից մեկը:

Ըստ Կառավարության որդեգրած քաղաքականության՝ կարևորվում է տնային տնտեսությունների և համայնքների բարեկեցությունը, մասնավորապես գյուղերում, որտեղ այն հիմնականում կախված է կենսական ռեսուրսների օգտագործումից: Այս ռեսուրսները չափազանց կարևոր են համայնքների սննդային կարիքները բավարարելու, ինչպես նաև նրանց համար հավելյալ եկամուտ ապահովելու տեսանկյունից: Այսպիսով, Կառավարությունը պետք է վարի քաղաքականություն և ունենա ռազմավարություն, որոնք կունենան երկու նպատակ՝ կենսաբազմազանության բարելավված պաշտպանություն և գյուղերի բնակչության ավելի լավ բարեկեցություն:

Վերջին վեց ամիսների ընթացքում ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնը, «Թայմ լենդ» գիտաուսումնական հիմնադրամը և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը համագործակցել են՝ իրականացնելու «Հայաստանում վայրի բույսերի հավաքի կարգավորում» ծրագիրը: Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան կողմից ֆինանսավորվող այս ծրագրի նպատակներն են.

1. բացահայտել և ներգրավել վայրի բույսերի հավաքի և մշտադիտարկման գործընթացում ներգրավված պետական և ոչ պետական հիմնական շահագրգիռ կողմերին,
2. մշակել ՀՀ Կառավարության գործողությունների օրակարգ՝ վայրի ուտելի բույսերի հավաքն ավելի արդյունավետ կառավարելու և դրա կայունությունն ապահովելու համար,
3. նպաստել տնտեսական կարիքները և բնապահպանական խնդիրները հավասարակշռելու մասին իրազեկության և ըմբռնման մակարդակի բարձրացմանը:

Տվյալ նպատակներին հասնելու համար ծրագրի շրջանակներում հաջողվել է ավարտին հասցնել հետևյալը.

1. քարտեզագրվել են վայրի բույսերի հավաքման հիմնական շահագրգիռ կողմերը (կառավարական գործակալություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, համայնքների խմբեր կամ ցանցեր, ձեռնարկություններ, հետազոտողներ) (տե՛ս այստեղ),

2. իրականացվել է ոլորտի օրենսդրության և ինստիտուցիոնալ կառուցվածքի վերլուծություն (Հավելված 1),
3. վերանայվել է Հայաստանում վայրի բույսերի հավաքի կարգավորման և կառավարման մասին նախկին փորձի վերաբերյալ գրականությունը (Հավելված 2),
4. ստեղծվել է առցանց հարթակ՝ վայրի բույսերի հավաքին և մշտադիտարկմանն առնչվող ռեսուրսներով (տե՛ս այստեղ),
5. կազմակերպվել և անցկացվել է վայրի բույսերի հավաքի և դրա կարգավորման ու կառավարման վերաբերյալ աշխատաժողով՝ բազում շահառուների մասնակցությամբ (Հավելված 3),
6. վայրի բույսերի հավաքի կարգավորման և կառավարման գործողությունների օրակարգի համար մշակվել են առաջարկություններ՝ հիմնված շարունակական գործողությունների և վերջնարդյունքների վրա (ներկայիս փաստաթուղթը):

Գործողությունների օրակարգի համար նախատեսված առաջարկությունները, որոնք ուղղորդում և տարբերակներ են առաջարկում Հայաստանի Կառավարությանը, դասակարգվում են հետևյալ ընդգրկուն խմբերում՝

1. կենսաբազմազանության մշտադիտարկման և գույքագրման զարգացման համար անհրաժեշտ կարողությունների զարգացում և աքսելերացիա (աճի տեմպի արագացում),
2. վայրի բույսերի հավաքի և արտադրանքի տնտեսության ընկալման բարելավում,
3. վայրի բույսերի հավաքի արդյունքում ստացված արտադրանքի և ռեսուրսների հավաքի, վերամշակման և իրացման օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակների բարելավում,
4. մասնավոր հատվածի նախաձեռնությունների խթանում,
5. վայրի հավաքից մշակման անցնելը,
6. կանանց և գյուղական համայնքների հզորացում,
7. հանրային կրթություն և իրազեկության բարձրացում:

Առաջարկներ

1. Կենսաբազմազանության մշտադիտարկման և գույքագրման զարգացման համար անհրաժեշտ կարողությունների զարգացում և աքսելերացիա (աճի տեմպի արագացում)

Վերջին ուսումնասիրություններն ընդգծում են տարբեր տեսակի պոպուլյացիաների, ներառյալ բույսերի տեսակների արդյունավետ մշտադիտարկման համակարգ(եր)ի բացակայությունը: Դրանք նաև մատնանշում են Հայաստանի բույսերի Կարմիր գրքի թերությունները, մասնավորապես երկրի էնդեմիկ բույսերի տեսակների մեծամասնության բացակայությունը գրքում՝ չնայած այն փաստին, որ, ըստ զեկույցների, հատուկ պահպանվող տարածքներում կատարվել է վայրի բույսերի հավաք և մնացել անպատիժ:

Ակնկալվում է, որ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը պետք է լուծի այս խնդիրը՝ թարմացնելով Հայաստանի Կարմիր գրքի բովանդակությունը: Նախարարության ներկայացուցիչները նաև նշում են, որ իրենց գերատեսչությունը նախատեսում է ստեղծել կենսաբազմազանության գույքագրման և մշտադիտարկման համակարգ Հայաստանի համար: Չնայած կային ֆինանսավորման ծրագրեր, այս պահին (2020 թ. դեկտեմբեր) մեզ համար պարզ չէ՝ արդյոք դրանք ուժի մեջ են COVID-19 համավարակի և հետպատերազմյան ներկայիս պայմաններում:

Վայրի բույսերի հավաքի առումով Հայաստանի նոր Կարմիր գրքի հրապարակումը կօգնի թարմացնելու պաշտպանության կարիք ունեցող, ծայրահեղ վտանգված բույսերի տեսակների ցանկը: Կենսաբազմազանության կադաստրը կօգնի ավելի լավ հասկանալու տնտեսապես արժեքավոր բույսերի բաշխումը, առատությունը և առողջությունը: Այս տեղեկատվությունը չափազանց կարևոր է ողջամիտ քաղաքականություն և օրենսդրություն մշակելու համար: Հնարավոր է՝ առանց դրա քննարկումները դառնան անհիմն և ենթարկվեն բազում քաղաքական շահարկումների տարբեր կողմերից, որի

հետևանքով կարող են ձախողվել կենսաբազմազանության պաշտպանությունը և համայնքների բարեկեցության ապահովումը:

Վտանգված տեսակների Կարմիր գրքի թարմացումը և հրապարակումը կամ կենսաբազմազանության կադաստրի ստեղծումն ու պահպանումը լայնածավալ և բազում տարիներ պահանջող նախաձեռնություն է, որի համար անհրաժեշտ են փորձագիտական և ֆինանսական շարունակական ռեսուրսներ: **Մոտ ապագայում այս նախաձեռնությունների վերջնարդյունքներից օգտվելու համար պետք է ավելի շատ ջանքեր գործադրել և արագացնել գործընթացն այս ուղղությամբ:**

Որպես լայնածավալ գործողությունների իրականացում կամ գուցե անգամ դրանց նախաձեռնում՝ առնվազն վայրի բույսերի հավաքի դեպքում մոտ ապագայում կարելի է դիտարկել մի քանի գործողություններ, որոնք տեղեկություն կտան տնտեսապես արժեքավոր բույսերի, ինչպես նաև վտանգված տեսակների առատության, բաշխման և առողջության մասին: Այս ունակությունների զարգացումը նաև կօգնի կենսաբազմազանության մշտադիտարկման և գույքագրման ոլորտում մեծածավալ ջանքերի կայունության հարցում:

Ավելին, քանի որ չկա վստահելի տեղեկատվություն անձնական օգտագործման կամ առևտրային նպատակներով գյուղական համայնքների հավաքած վայրի բույսերի քանակի կամ դրանց տեսակների մասին, նմանատիպ ուսումնասիրությունների օգնությամբ հնարավոր կլինի տարրական պատկերացում կազմել խնդրի վերաբերյալ:

Պետք է նշել, որ տեսակների, ինչպես նաև հավաքի տեղանքների, քանակի և իրականացման վերաբերյալ վստահելի տեղեկատվության բացակայության պատճառով կարող է հնարավոր չլինել լիարժեք իրականացնել վայրի հավաքի ստանդարտներից շատերը: Օրինակ՝ Դեղաբույսերի և անուշաբույր բույսերի կայուն վայրի հավաքի միջազգային ստանդարտները (ISSC-MAP) և Վայրի հավաքի կանաչ կովկասյան ստանդարտները պահանջում են նմանատիպ տեղեկատվություն համապատասխանությունը հաստատելու համար[1]:

Առաջարկվող գործողություններից մի քանիսը՝ ստորև.

1. Ուսումնասիրել **վայրի բույսերի հավաքի հարաբերական նշանակությունը բույսերի տեսակների** բաշխման, առատության և առողջության համար մարդու այլ շարունակական կամ կանոնավոր գործողությունների համեմատ, ինչպիսիք են անասունների ազատ արածեցումը, խոտերը մեծ ծավալով կտրելը և դրանց հավաքը մարգագետիններում, թունաքիմիկատների օգտագործումը և նմանատիպ այլ գործողություններ: Ի հավելումն սրա՝ պետք է շեշտել, որ կան մարդու մի շարք գործողություններ, որոնք կարող են նշանակալից ազդեցություն ունենալ կենսաբազմազանության վրա. հանքարդյունաբերություն, անտառահատումներ, գյուղատնտեսության ընդլայնում, քաղաքաշինություն և այլն: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ թեև վայրի բույսերի ազգային հավաքը գուցե խոչընդոտ չի համարվում որոշ կարևոր տեսակների գոյատևման համար, սակայն առանձին տեղանքներում կարող են լինել նմանատիպ սպառնալիքներ:

2. Հիմնել **տեղեկատվական ցանց** վայրի հավաք իրականացնողների, քաղաքացիական հասարակության խմբերի, ասոցիացիաների և մասնավոր ընկերությունների միջև, ստեղծել հավաքվող բույսերի տեղանքի, տեսակների և քանակի վերաբերյալ տեղեկությունների կամավոր փոխանակման հարթակ: Սա նաև կարող է շատ կարևոր մեթոդ լինել երկրի տարածքում հատուկ վայրերի մասին տեղեկություններ հավաքելու համար: Խոսքը հատկապես վերաբերում է այն

[1] Վայրի հավաքի ստանդարտների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու համար տե՛ս International Center for Agribusiness Research and Education-ի (ICARE) *Wild Harvest Value Chain Assessment Report Armenia* (World Bank, 2018) զեկույցը: Այս և այլ զեկույցներ հասանելի են հետևյալ հղումով՝ https://ace.aua.am/wild-plant-collection/resources/research-and-policy-papers/:

վայրերին, որտեղ մտահոգիչ կարգավիճակով տեսակները գուցե լինեն վտանգված գերհավաքի կամ այլ պատճառներով, որոնց մասին գուցե տեղեկություններ լինեն:

3. Օգտագործել **հանրային մասնակցությունը, քաղաքացիական գիտության, համալսարանների ուսանողների և համայնքների մակարդակում արված հետազոտությունները**՝ քաղաքացիների՝ կենսաբազմազանության և վայրի բույսերի հավաքի իմացության մասին գաղափար կազմելու համար: Տեղեկատվության պատշաճ համակարգմամբ և որակի համապատասխան ստանդարտներով այս աղբյուրները կարող են լինել բույսերի առատության և բաշխման մասին տեղեկությունների թարմացման բարդ համակարգի մի մասը: Դրանք են վայրի բույսերի հավաքի համայնքների պրակտիկաները, օգտագործումը և օգուտը, մարտահրավերներն ու հնարավորությունները:

4. Առաջնահերթություն տալ այն հետազոտություններին, որոնք շեշտը դնում են մարդկանց բնակավայրերին մոտ **հատուկ պահպանվող տարածքների և ազգային անտառների վրա՝** որպես անմիջական ազդեցության և ենթակայության վայրերի:

5. Մարդկանց բնակավայրերին մոտ գտնվող **հատուկ պահպանվող փոքրաթիվ տարածքներում անցկացնել փորձնական ուսումնասիրություն**՝ հասկանալու համար հավաքի ձևը և դրա ազդեցությունը բույսերի բազմազանության և էկոհամակարգի վրա:

6. Կենսաբազմազանության կադաստր ստեղծելիս առաջնահերթությունը տալ կարևոր տեսակների ուսումնասիրությանը և քարտեզագրել դրանց բաշխումը՝ պաշտպանությունը կազմակերպելու համար:

7. Իրականացնել **պարբերական վերլուծություններ և վերը նշված գործողությունների համադրում** (տեղեկությունների փոխանակում, քաղաքացիական գիտություն, հանրային մասնակցություն, փորձնական ուսումնասիրություններ և այլն)՝ լուսաբանելու համար Կարմիր գրքի թարմացման և կենսաբազմազանության կադաստրի քաղաքականության վերաբերյալ փաստերը, միտումները և կիրառությունը:

2. Խորացնել վայրի բույսերի կայուն հավաքի տնտեսագիտության, արժեշղթայի և արտադրանքի ըմբռնումը

Կենսաբազմազանության, բաշխման և դրա առատության ըմբռնմանը զուգահեռ կայուն քաղաքականության և օրենսդրության ստեղծման համար անհրաժեշտ է հասկանալ վայրի բույսերի հավաքի, արժեշղթայի և արտադրանքի տնտեսագիտությունը: Ներկայումս Հայաստանում այս ոլորտի տնտեսագիտական վերլուծություն չկա, առկա է տեղեկատվության մեծ բաց: Այսպես, առանց տնտեսագիտությունը հասկանալու՝ լիցենզիայի կամ թույլտվության վճարները չեն կարող համարժեք սահմանվել: Եթե վճարները շատ ցածր լինեն, հնարավոր է՝ կենսաբազմազանության պաշտպանությունը տուժի: Նմանատիպ տնտեսագիտական վերլուծությունները կարող են նաև լույս սփռել վայրի հավաքի ոլորտի քաղաքական տնտեսության վրա: Տնտեսապես ո՞վ է ավելի շատ շահում: Ինչպե՞ս կարող են գյուղական համայնքներն ավելի շատ շահել իրենց հավաքած բերքից: Արժեք ավելացնելու ի՞նչ գործողություններ է հնարավոր ձեռնարկել գյուղական համայնքներում՝ ավելի մեծ եկամուտներ ապահովելու համար: Ե՞րբ է տնտեսապես հնարավոր վայրի հավաքից անցնել մշակմանը: Գործողությունների օրակարգի գնահատումը և տնտեսական վերլուծությունը կարող են ներառել.

1. Արժեշղթայի տարբեր փուլերում **վայրի բույսերի հավաքի շուկայի մշտադիտարկում** (քանակը և գները). կառավարական գործակալությունները կարող են աշխատել ակադեմիական ինստիտուտների, քաղաքացիական հասարակության և հավաքով զբաղվող համայնքների,

ինչպես նաև մանրածախ վաճառք կատարող անձանց հետ՝ այս տեղեկությունները հավաքելու համար:

2. Ուսումնասիրել հնարավորությունները և խոչընդոտները, որպեսզի **գյուղական համայնքները կարողանան իրականացնել մշակում՝ արժեքի ավելացմամբ և կապ հաստատել իրենց վայրի բույսերի հավաքի վերջնական օգտագործողների հետ**: Ուսումնասիրությունը կարող է բացահայտել այլընտրանքային արժեշղթաներ, մասնավորապես այն բաղադրիչները, որոնք սովորաբար վատնվում են: Ըստ տեղեկությունների՝ կան միջնորդ ձեռնարկություններ, որոնք աշխատում են հավաք իրականացնողների հետ՝ բարելավելու համար նրանց հավաքի, ինչպես նաև հավաքած բույսերի մշակման պրակտիկան (օրինակ՝ մաքրելը, չորացնելը, դասակարգելը), և այս ամենը ավելի մեծ եկամուտ է բերում հավաք իրականացնող գյուղացիներին: Արդեն իսկ աշխատանքներ են տարվել որակի միջազգային ստանդարտների (օրգանական և այլն) ընդունման հարցի ուղղությամբ. սա նույնպես կարող է ավելացնել վայրի հավաքի արժեքը և եկամուտը: Համագործակցությունների, ինչպես նաև առևտրային ցանցի ստեղծման շնորհիվ կարելի է որդեգրել նմանատիպ պրակտիկա և կապ հաստատել գնորդների հետ: Այսպիսի ուսումնասիրությունը կարող է նաև ի հայտ բերել մեկ այլ մոտեցում, այն է՝ հավաքված վայրի բույսերի դիվերսիֆիկացիան՝ նոր կամ այլընտրանքային շուկա ապահովելու համար:

3. Ուսումնասիրել **ներկայիս վայրի և մշակված բույսերի հավաքի քանակը և վայրի հավաքից մշակման անցնելու տնտեսագիտությունը**: Մեծաքանակ արտադրության համար նմանատիպ անցումը կնվազեցնի էկոհամակարգերի վրա առկա ճնշումը, որտեղ էլ իրականացվում է վայրի բույսերի հավաքը: Ավելին, եթե այսօրինակ մշակման գործընթացը պատշաճ կատարվի, այն կարող է օգնել վտանգված տեսակների գենետիկական պաշարի առումով, որի շնորհիվ հնարավոր է վերականգնել էկոհամակարգը նմանատիպ բույսերով: Այսպիսի ուսումնասիրությունը կարող է օգնել փորձելու հաշվարկել, թե հավաքի քանի տոկոսն են կազմում վայրի կամ մշակված բույսերը (պետք է պարզել հավաքված բույսերի քանակը): Վերամշակողներից հարկեր (վճարներ) գանձելու համար առաջին հերթին պետք է գնահատել հավաքված բերքի ծավալը: Սա իր հերթին օրենսդրական բարեփոխումների հիմք կստեղծի, որն անհրաժեշտ է տնտեսագիտական վերլուծությունների համար:

4. Ուսումնասիրել և խթանել սերմերի ու սերմնաբույսերի շուկաների զարգացումը քաղաքային սպառողների համար, որոնք, հնարավոր է, ցանկանում են աճեցնել իրենց սեփական բույսերը՝ արժեքավոր սննդային կամ բժշկական տեսանկյունից: Նմանատիպ «արա ինքդ» բույս աճեցնելու շուկաների զարգացումը կնվազեցնի ճնշումը վայրի, մասնավորապես վտանգված բույսերի հավաքի վրա: Այսօրինակ շուկաները զարգացնելիս պետք է խուսափել ոչ բնիկ կամ ինվազիվ բույսեր ներկայացնելուց, որոնք կարող են վնաս հասցնել երկարաժամկետ հեռանկարում:

3. Վայրի բույսերի հավաքից ստացած ռեսուրսների և արտադրանքի կայուն հավաքի, մշակման և վաճառքի հետ կապված իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների բարելավում

Հայաստանի օրենսդրությունը սահմանում է կանոններ և ընթացակարգեր, որոնց նպատակն է կարգավորել կենսաբազմազանության արտադրանքի հավաքը և օգտագործումը: Օրինակ, ըստ ՀՀ անտառային օրենսգրքի և «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի, պետության սեփականություն համարվող տարածքներում վայրի բույսերի հավաքի լիցենզիան/թույլտվությունը պարտադիր է: Ըստ օրենքի՝ լիցենզիա կամ թույլտվություն ստացած անձինք պետք է վճարումներ կատարեն պետությանը հավաքած բերքի համար: Այնուամենայնիվ, այս օրենքները ինչպես հարկն է չեն կիրառվում ինստիտուցիոնալ կարողությունների պակասի և պետության կամքի բացակայության պատճառով, քանի որ վերջինս այն ընկալում է որպես բեռ գյուղական համայնքների և տնտեսության համար՝ կարգավորումներին համապատասխանեցնելու և ֆինանսական առումներով: Որպես հետևանք՝ հավաքն

իրականացվում է առանց պետության կողմից որևէ կանոնակարգման և վերահսկողության, որը թույլ կտար հասկանալ՝ արդյոք քաղաքականության նպատակներն իրականացված են, թե ոչ:

Օրենսդրության, կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակների վերանայումն այնուամենայնիվ ցույց է տալիս, որ կա այս շրջանակի արդյունավետությունը բարելավելու անհրաժեշտություն՝ կենսաբազմազանության պաշտպանության և տնտեսական բարեկեցության քաղաքականության երկկողմ նպատակներին հասնելու համար: Այս բաժնում կներկայացվեն ուղղություններ, որոնցով հնարավոր կլինի կատարել այս բարելավումները, ինչպես նաև մոտեցումներ, որոնք սկիզբ կդնեն ամենաարդյունավետ բարեփոխումներին: Առաջարկվող ուղղություններն են.

1. **Ձևավորել բազում շահագրգիռ կողմերից կազմված աշխատանքային խմբեր՝ վայրի բույսերի հավաքի վերաբերյալ օրենսդրական և ոլորտի կարգավման փոփոխություններ մշակելու համար**: Կառավարական գործակալությունների ներկայացուցիչներից, իրավական հարցերով փորձագետներից և այլ շահագրգիռ անձանցից կազմված նմանատիպ աշխատանքային խմբերը (դրանք փաստացի իրականացնում են կամ պատրաստվում են իրականացնել համապատասխան գործողությունները) օգտակար կլինեն, իրապես անհրաժեշտ՝ քննարկելու և մշակելու օրենսդրական բարեփոխումները: Առանց սրա՝ մասնակցելու և այդպիսով ներդրում ունենալու առանցքային հնարավորությունը հասարակության և շահագրգիռ կողմերի համար կլինի e-draft.am-ը, որտեղ օրենսդրական առաջարկությունները հրապարակվում են ֆիքսված ժամանակահատվածում՝ հասարակության մեկնաբանությունները ստանալու համար: Թեպետ e-draft.am-ի նման հարթակը Հայաստանում օրենսդրության բարելավման գործընթացների դրական զարգացումներից մեկն է, այդտեղ հրապարակված փաստաթղթերը անցնում են կառավարական մարմինների միջգերատեսչական վերանայման երկարաժամկետ փուլ, որն էլ անհնար է դարձնում առաջարկվող նախագծերում էական փոփոխություններ կատարելը: Բազում շահագրգիռ կողմերի մասնակցությունը առաջարկության մշակման փուլում մեծացնում է ավելի համոզիչ լուծում ստանալու հնարավորությունը, որն էլ կնպաստի քաղաքականության նպատակների իրականացմանը:

2. Բարեփոխումներ իրականացնել **լիցենզավորման, թույլատրման և վճարների գնահատման համակարգում**, որպեսզի այն համապատասխանի կենսաբազմազանության պահպանության և տնտեսության բարեկեցության բարելավման քաղաքականության երկկողմ նպատակներին: Վայրի բույսերի հավաքի ներկա լիցենզավորման համակարգը անբավարար է վերը նշված նպատակներին հասնելու համար, որովհետև. ա) վճարներ է սահմանում տեղական բնակչության՝ հավաք իրականացնողների մեծամասնության համար՝ ստեղծելով տնտեսական բեռ այն մարդկանց համար, որոնք արդեն իսկ ապրում են տնտեսական ծանր վիճակում, բ) ստեղծում է ավելորդ վարչական բեռ և՛ հավաք իրականացնողների, և՛ անտառի ղեկավարության համար և գ) ո՛չ պրակտիկ է, ո՛չ էլ իրականանալի (այն տարածքները, որտեղ իրականացվում են հավաքները, չունեն մուտքեր, և կառավարելը կպահանջի շատ ռեսուրսներ՝ հավանաբար գերազանցելով հավաքած բերքի արժեքը):

   Թույլտվության և վճարների գնահատման համակարգի առումով բարեփոխումների բազում տարբերակներ պետք է հաշվի առնել: Ըստ գրականության, օրենսդրության համապարփակ ամփոփման և շահագրգիռ կողմերի կարծիքների՝ բարեփոխումների առանցքային ուղղություններն են՝ ա) խուսափել անհատ հավաքողներին ծանրաբեռնելուց, որոնք հավանաբար սոցիալապես և տնտեսապես խոցելի խմբից են, բ) անհատ հավաքողի համար վերացնել թույլտվություն ստանալը և վճարումներ կատարելը՝ դա սահմանելով արժեշղթայի այլ օղակների համար, օրինակ՝ վերամշակողների, մեծածախ առևտրով զբաղվողների, վերջնական մանրածախ վաճառողների համար (ինչպես, օրինակ, սուպերմարկետները) և գ) ապահովել վարչական արդյունավետությունը, որի պայմաններում ծախսը չի գերազանցի պետության և ձեռներեցության շահերը:

Առաջարկներ կան՝ քննարկելու մասնավորապես համայնքի սեփականություն համարվող տարածքում վայրի բույսերի հավաքի կառավարման մեջ տեղական ինքնակառավարման մարմինների դերը մեծացնելու հարցը: Համայնքների սեփականություն և պետության սեփականություն համարվող տարածքներում (ոչ անտառային կամ ոչ բնության հատուկ պահպանվող տարածքներում) վայրի բույսերի հավաքի կանոնակարգման և վերահսկման աշխատանքները, որոնք իրականացվում են տեղական համայնքների և կառավարական գործակալությունների համատեղ ջանքերով, չեն ներառում վայրի բույսերի հավաքի իրավական կարգավորման դաշտը: Ինչ վերաբերում է մասնավոր սեփականություն համարվող հողերում բերքահավաքին, ապա պետք է ստեղծել համապատասխան մեխանիզմ, որի շնորհիվ հնարավոր կլինի հետևել հավաքին: Այս առումով պետք է համապատասխանեցվեն տեղական ինքնակառավարման մարմինների դերը և գործառույթները:

Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են նաև համագործակցել պահպանվող տարածքների և ազգային անտառների ղեկավարության հետ: Այս առումով, օրինակ, համայնքները, որտեղ տեղի են ունենում հավաքները, կարող են թույլտվություն ձեռք բերել և վճարումներ կատարել, եթե համայնքի անդամների հավաքած բերքի քանակը գերազանցի որոշակի չափը:

Տեղական ինքնակառավարման մարմիններին ներգրավելու վերաբերյալ ցանկացած օրենսդրական, ինչպես նաև ոլորտի կարգավորման զարգացման առնչությամբ հարկ է նշել, որ Շրջակա միջավայրի նախարարությունը և այլ լիազոր մարմիններ պետք է սերտ համագործակցեն վարչապետի գրասենյակի հետ, որը գյուղերի զարգացման ռազմավարություն է մշակում: Վերջինս ունի հստակ դրույթներ այն մասին, թե ինչպես ապահովել համայնքի անդամների և տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ և կայուն ներգրավվածությունը[2]:

Ինչպես նշվել էր ավելի վաղ, գանձվող գումարի չափը պետք է հիմնված լինի վայրի բույսերի պահանջարկի և առաջարկի մասին տեղեկատվության վրա: Վերլուծությունը կարող է նաև ընդգրկել շուկայի կառուցվածքը՝ հաշվարկելու համար նմանատիպ պարտադիր վճարների հավանական դրական կամ բացասական ազդեցությունը մեծ, միջին, փոքր կամ միկրո բիզնեսների վրա:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը ընդունում է, որ առկա լիցենզավորման և վճարների գնահատման համակարգում կան թերացումներ: Նախարարությունը ներկայումս աշխատում է օրենսդրության մեջ մի շարք բարեփոխումներ մտցնելու ուղղությամբ՝ ներառյալ փոփոխությունները «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» և «Բուսական աշխարհի» մասին ՀՀ օրենքներում ՝ վայրի բույսերի հավաքի կարգավորման շրջանակը բարելավելու նպատակով: Այսպես, նախարարության ներկայացուցիչները նշել են, որ ցանկանում են ներկայացնել չափորոշիչներ, ըստ որոնց, եթե հավաքողը եկամուտ է հետապնդում, ապա նա պետք է թույլտվություն ունենա և կատարի վճարումներ: Եթե հավաք իրականացնողը շահույթ չի հետապնդում, ապա նրանից չի պահանջվի թույլտվություն կամ վճարում (օրինակ, եթե անձնական օգտագործման նպատակով է հավաք իրականացնում): Չնայած գովելի է, որ նախարարությունը աշխատում է իրավիճակը շտկելու ուղղությամբ, այնուամենայնիվ անհավանական է, որ առաջարկվող բարեփոխումները կարողանան օգնել վերը նշված քաղաքականության երկկողմ նպատակների իրականացմանը: Նախ՝ հավաքողի վրա շեշտը դնելը բացառում է վերամշակողներին և մանրածախ վաճառքով զբաղվողներին, որոնց ավելի հեշտ է գտնել և կիրառել թույլտվության և վճարների համակարգը: Երկրորդ՝ դժվար է, եթե ոչ անհնարին, պարզել՝ արդյոք հավաքողի նպատակը եկամուտ ստանալն է, թե ոչ: Երրորդ՝ վայրի

[2] Վարչապետի խորհրդականը՝ պարոն Ռոբերտ Ղուկասյանը, 2020 թվականի վերջին նշել է, որ Կառավարությունը գյուղերի զարգացման ռազմավարություն է մշակում, որտեղ իրենց դերակատարությունը կունենան քաղաքացիները և տեղական ինքնակառավարման մարմինները: Այս կամ նմանատիպ ռազմավարությունների առաջարկությունները կարող են օգտակար լինել օրենսդրական բարեփոխումների համար:

բույսերի հավաքի նույն քանակը կարող է ծառայել ինչպես անձնական օգտագործման, այնպես էլ վաճառքի համար: Առանց քանակի սահմանափակումների՝ կենսաբազմազանության պաշտպանությունը լուրջ վտանգի է ենթարկվում:

3. **Թույլտվության տրամադրման պահանջների համար տարածքների և տեսակների առաջնահերթությունների ցուցակ կազմել**: Վայրի բույսերի հավաքը կարող է իրականացվել մի շարք տարածքներում՝ բնության հատուկ պահպանվող տարածքներ, ազգային անտառներ, պետության սեփականություն համարվող տարածքներ, որոնք ո՛չ ԲՀՊՏ են, ո՛չ էլ ազգային անտառ, համայնքի սեփականություն և մասնավոր սեփականություն համարվող տարածքներ: Բնապահպանության տեսանկյունից բոլոր այս նշված տարածքներում էլ հավաքը պետք է կարգավորվի, քանի որ վայրի բույսերի կարևոր կամ վտանգված տեսակները չեն «հետևում» սեփականության սահմաններին և, անկախ դրանից, կարող են հայտնաբերվել ցանկացած տարածքում: Ներկայիս օրենսդրությունը սահմանափակ է, քանի որ ներառում է բուսական աշխարհի տեսակների պաշտպանության մասին ընդհանուր ձևակերպում՝ անկախ դրանց աճելու վայրից, բայց նշված չէ բուսական աշխարհի պաշտպանության որևէ մեխանիզմ ԲՀՊՏ-ներից և ազգային անտառներից դուրս աճող տեսակների վերաբերյալ: Թեպետ տեսակների պաշտպանության տեսանկյունից սա խնդրահարույց է, այս ցուցակում բոլոր տեսակի սեփականությունների ընդգրկումը կարող է անիրագործելի լինել: Պետության մշտադիտարկման և իրավակիրառման ինստիտուցիոնալ կարողությունները շատ սուղ են, և անհրաժեշտ կլինի առաջնահերթություններ դնել՝ որոշակի շոշափելի մակարդակի պաշտպանություն ապահովելու համար: Գերակա առաջնահերթության տարածքներ կարող են լինել ԲՀՊՏ-ները և ազգային անտառները: Սրանց կարող են հաջորդել համայնքի սեփականություն համարվող տարածքները, մասնավորապես եթե տեղական ինքնակառավարման մարմինները ընդգրկվեն վայրի բույսերի հավաքի կառավարման համակարգի մեջ: Մասնավոր սեփականություն համարվող տարածքները, հատկապես մեծ տարածքները, կարող են ենթակա լինել կարգավորման, եթե տեղական ինքնակառավարման մարմինները ներառված լինեն: Այս ոլորտում օրենսդրական բարեփոխումներ մշակելիս պետք է ուսումնասիրել առաջնահերթության հարցը:

4. Շահույթ ստանալու, ինչպես նաև էկոհամակարգային ծառայությունների դիմաց վճարումներն ապահովելու համար պետք է կնքել **համագործակցության համաձայնագրեր համայնքների, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, ԲՀՊՏ-ների, մշակողների և մանրածախ առևտրի ցանցերի միջև**: Վայրի բույսերի հավաքի՝ որպես էկոհամակարգային առանձնահատուկ ծառայություն տրամադրող տեսակի զարգացումը խթանելու նպատակով «Հայանտառ» ՊՈԱԿ-ը և համապատասխան ԲՀՊՏ-ները կարող են իրենց ներդրումն ունենալ՝ այս ծառայություններն օգտվողների համար ավելի բարձրորակ և հասանելի դարձնելու համար (օրինակ՝ վնասատուների վերահսկում և այլ անհրաժեշտ աշխատանքներ, օգտակար տեղեկատվություն, գծանշված ծուղակներ, անվտանգության պայմաններ և այլն): Այլ կերպ ասած՝ հավելյալ ծառայություններ մատուցելու համար կառավարման մարմինները պետք է ունենան համապատասխան կարողություններ և հմտություններ: Համայնքների, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, ԲՀՏՊ-ների, մանրածախ առևտրով զբաղվող ցանցերի, մշակողների և առևտրային հարաբերությունների մասնակից այլ անձանց միջև համագործակցության տարբեր համաձայնագրեր կարող են կնքվել եկամուտ, ինչպես նաև էկոհամակարգային ծառայությունների դիմաց վճարումներ ստանալու նպատակով: Նմանատիպ մոդել ստանալու համար խորհուրդ է տրվում մշակել ռազմավարություն՝ գործողությունների պլանով հանդերձ, որը կներառի գնահատականների կիրարկում, հասարակության իրազեկության բարձրացում և կառավարող մարմինների ունակությունների ուժեղացում:

5. **Մշակման այլընտրանքներ տրամադրել համայնքներին, որոնց հույսը պետական սեփականություն համարվող տարածքներից և ազգային անտառների արգելանոցներից (որտեղ հավաքը արգելվում է՝ ըստ օրենքի) վայրի հավաքն է**: Չնայած անօրինական լինելուն՝ այս տարածքներում հավաք իրականացնելը հաճախ հանդիպող երևույթ է, ինչը պայմանավորված է տեղի բնակչության սոցիալական պայմաններով և այլընտրանքային

եկամուտների բացակայությամբ: Վիճակը բարելավելու համար խորհուրդ է տրվում արգելանոցներում և արգելանոցային գոտիների հարակից համայնքներում խթանել փոքր և միջին ձեռներեցությունների զարգացումը:

6. **Մեծացնել վտանգված տեսակների հավաքի, մշակման և իրացման համար նախատեսված տուգանքը և համապատասխանեցնել իրավական պատասխանատվության համակարգը:** Ակնկալվող փոփոխություններով պայմանավորված՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը պետք է ավելի խիստ պատիժ սահմանի բուսական ռեսուրսների հավաքի և վաճառքի օրենսդրական պահանջների խախտման համար, մասնավորապես այն տեսակների, որոնք չի թույլատրվում հավաքել կամ ենթակա չեն սեզոնային սահմանափակումների: Սրանք ողջունելի փոփոխություններ են, որոնք, սակայն, պետք է ուղեկցվեն հանրությանը կրթելու և իրազեկությունը բարձրացնելու ինտենսիվ արշավներով: Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ հավաք իրականացնողը չպետք է լինի միակ պատասխանատու կողմը: Մշակողները և վաճառողները նույնպես պետք է ենթարկվեն իրավական պատասխանատվության: Մինչ վտանգված և Հայաստանի Կարմիր գրքում ներառված տեսակների հավաքը պատժվում է օրենքով (հավաք իրականացնողները ենթարկվում են պատասխանատվության, եթե բռնվում են հավաք իրականացնելիս), վաճառքի համար նախատեսված ոչ մի տուգանք չկա: Ավելին, համայնքապետի կողմից տրվող վկայականը պետք է լինի պարտադիր պահանջ՝ ապացուցելու համար, որ Կարմիր գրքում ներառված կամ սեզոնային սահմանափակումների ենթակա տեսակները (եթե վաճառվում են արգելված սեզոնին) աճեցվում են մասնավոր սեփականություն համարվող տարածքում: Վկայականի պատճենը (նկարը) պետք է նաև առկա լինի վաճառողի մոտ (ֆիզիկական կամ իրավաբանական անձ), որը հնարավորություն կտա հետևելու շղթային: Փաստաթղթերը պետք է հասանելի լինեն արժեշղթայի ցանկացած փուլում՝ ապացուցելու համար հավաքի կամ դրանից ստացված արտադրանքի սկզբնաղբյուրը կամ իրավական հիմքը: Այս մոտեցումը պետք է կիրառվի նաև մանրածախ վաճառքի վերջնական փուլում: Սա պետք է կիրառելի լինի անհատների կամ գործարարների կողմից հավաքված կամ իրացված վտանգված և Կարմիր գրքում ներառված տեսակների համար:

7. Որոշ զեկույցներում, օրինակ՝ Համաշխարհային բանկի (World Bank) և GIZ-ի (տե՛ս Հավելված 2), առաջարկվում է, որ **կառավարական մի գործակալություն կամ լիազորված անձանց խումբ** տրամադրի վայրի բույսերի հավաքի լիցենզիան/վկայականը, որը կուժեղացնի Կառավարության մշտադիտարկումը և վերահսկողությունը՝ որևէ խոչընդոտ չստեղծելով այս ոլորտի շահագրգիռ կողմերի համար (օրինակ՝ հավաք իրականացնողների, մշակողների, վաճառողների և այլոց): Կառույցների բարդ խնդիրը կարող է լուծվել դրանց գործառույթների հստակեցմամբ կամ նոր գործառույթների սահմանմամբ կամ նոր կառույցներ/հաստատություններ հիմնելով՝ որպես աշխատանքային խմբի/խմբերի պարտականությունների մի մաս:

4. Վայրի հավաքից մշակման անցնելը

Կենսաբազմազանության արտադրանքներ մատակարարելու համար այգեգործական հարմարությունների ստեղծումը՝ ոչ անմիջական մշակման միջոցով, կարող է լինել շատ լավ այլընտրանք, որը **կթեթևացնի վայրի բնության մեջ ուտելի բույսերի պոպուլյացիայի վրա առկա ճնշումը**: Այս մոտեցումը կարող է նաև ապահովել **արտահանման ներուժ ունեցող բարձրորակ ապրանքների կայուն մատակարարում**: Վերը նշված 2-րդ հանձնարարականում առաջարկված վայրի հավաքից մշակման անցնելու տնտեսագիտության ուսումնասիրությունը կօգնի պարզելու, թե ինչ մակարդակի նախաձեռնություն և աջակցություն է անհրաժեշտ մշակման բիզնեսի աճը խթանելու համար: Այս հարցում կարևոր է **առաջնահերթությունը տալ վտանգված կամ Կարմիր գրքում ներառված տեսակներին**: Շուկայի այս ուղղվածությունը հնարավոր է խթանել ֆինանսավորման կամ հարկային, ինչպես նաև կորպորատիվ կայուն նախաձեռնությունների միջոցով: Կարևոր է նշել, որ այս ուղղությամբ ցանկացած քաղաքականության մշակման ժամանակ **գյուղական համայնքները պետք է դիտարկել որպես**

մշակման անցնելու գլխավոր շահառու: Սա հնարավոր է իրականացնել, օրինակ, մշակման բիզնեսի զարգացման նպատակով ներկայումս վայրի հավաքով զբաղվող գյուղական համայնքներին ֆինանսական կամ տեխնիկական աջակցություն տրամադրելով:

5. Խթանել մասնավոր հատվածի նախաձեռնությունները

Շահույթ հետապնդող և շահույթ չհետապնդող մասնավոր հատվածը շատ լիազորություններ կարող է ունենալ վերը նշված քաղաքականության երկկողմ նպատակները իրականացնելու համար: Եթե որոշ գործողությունների համար հնարավոր է, որ Կառավարության կամ դոնորների ֆինանսավորման/նախաձեռնության կարիք լինի, մեծ մասի դեպքում դրա կարիքը չկա: Վերը նշվածը կարելի է նաև կազմակերպել կամավոր հիմունքներով՝ ի նպաստ վայրի բույսերի արտադրանքի հավաք իրականացնող համայնքների/ցանցերի կամ վերջնական մանրածախ վաճառքն իրականացնողների շահի:

1. Խթանել Հայաստանի **տարբեր մարզերից հավաք իրականացնողների և վերամշակողների ցանցի ստեղծումը**՝ բարելավելու տեղեկությունների փոխանակումը և շուկայի պայմանների, ավելացված արժեքով ապրանքների կամ ծառայությունների երկկողմանի ուսումնասիրությունն ու կայուն հավաքի պրակտիկան:

2. Ստեղծել **հեռախոսային հավելված**՝ ուտելի վայրի բույսերի հավաք իրականացնողների ցանց ստեղծելու նպատակով, որը նրանց տեղեկատվություն կտրամադրի **շուկայի** (օրինակ՝ մանրածախ վաճառքի գները և այլն) և տարբեր տեսակի բույսերի համար գոյություն ունեցող **կարգավորման պահանջների** մասին: Սրա շնորհիվ գյուղացիները կարող են ամրացնել գնորդների հետ իրենց բանակցային դիրքերը, ինչպես նաև կխորացնեն իրենց գիտելիքները օրենքների և կարգավորումների վերաբերյալ: Բջջային նմանօրինակ հավելվածները, տեղեկություններ տալու նպատակով ներգրավելով հավաք իրակացնողներին, կարող են տրամադրել արժեքավոր տվյալներ կենսաբազմազանության վերաբերյալ[3]:

3. Ներառել **առևտրական ասոցիացիաները և կոոպերատիվները**՝ վայրի կայուն հավաքի պրակտիկան տարածելու և վայրի կայուն հավաքի միջազգային ստանդարտների մասին գիտելիքիների խորացման համար (օրինակ՝ օրգանական և այլն): Այս ստանդարտների և պրակտիկայի մեջ նախնական ներդրումների շնորհիվ ստացված բարձրորակ արտադրանքները կմեծացնեն բարձր գնով վաճառքի հնարավորությունները:

4. Ստեղծել կապ գյուղացի հավաք իրականացնողների ու մշակողների և այն **թանկարժեք ռեստորանների ու սննդի կետերի միջև**, որոնք ցանկություն ունեն սահմանելու բարձր որակի ստանդարտներ և համագործակցելու մատակարարների հետ՝ դրանց հասնելու համար:

5. Մեծաքանակ գնումներ կատարողները (օրինակ՝ սուպերմարկետները կամ արտահանողները) պետք է մշակեն ***մատակարարների զարգացման ծրագրեր***, որտեղ իրենք կկարողանան զարգացնել գյուղացի հավաք կազմակերպողների ու մշակողների հմտությունները և իմացությունը: Նրանք կարող են նաև աշխատել մանրածախ վաճառքով զբաղվողների, վերամշակողների և հավաք իրականացնողների հետ՝ **ուտելի վայրի բույսերի կայուն հավաքի կազմակերպման կամավոր ինքնամշտադիտարկման կամ պիտակավորման ստանդարտներ ստեղծելու համար**: Սպառողների համապատասխան կրթությամբ և վստահության ձևավորմամբ նման պիտակավորումը կարող է նպաստել շուկայի զարգացմանը այն արտադրանքների համար,

[3] Հայաստանում ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) և Վորչեստերի պոլիտեխնիկական ինստիտուտը նախատեսում են ներգրավել իրենց ուսանողական թիմերին նմանատիպ բջջային հավելվածների մշակման գործում: Նախատիպը մշակելուց հետո, որը նախատեսվում է 2021 թվականի ամռան վերջին, հնարավոր կլինի ավելի իրատեսորեն գնահատել, թե որքան իրականանալի կլինի այս լուծումը Հայաստանի և այլ երկրների համար: Ավելի մանրամասն տեղեկության համար կարող եք այցելել ace.aua.am կամ գրել հետևյալ հասցեով՝ ace@aua.am:

որոնք կենսաբազմազանությանը ոչ մի սպառնալիք չեն ներկայացնում, մասնավորապես ծայրահեղ վիճակում գտնվող կամ վտանգված տեսակների համար:

6. Հզորացնելով գյուղական համայնքների կանանց

Ուտելի վայրի բույսերի հավաքը հիմնականում իրականացնում են կանայք: Հաշվարկվում է, որ հավաք իրականացնողների և տեղական վերամշակողների մոտավորապես 90%-ը կանայք են, մինչդեռ վաճառքի ժամանակ՝ արժեշղթայի վերջին փուլում, նրանք կազմում են 50%-ը (Համաշխարհային բանկ, 2016): Չնայած կանայք այս ոլորտի արժեշղթայի որոշ փուլերում ակտիվ են, նրանց ներկայությունը թերի է դրա հատկապես արժեշղթայի պաշտոնական, մեծ եկամուտ ապահովող և արժեք ավելացնող օղակներում: Այս խնդիրն ավելի է բարդանում կանանցից ակնկալվող ավանդական դերակատարության, ձեռներեցությամբ և եկամտաբեր ու արժեք ավելացնող գործունեությամբ զբաղվելու խրախուսանքի և հմտությունների բացակայության պայմաններում (ներառյալ վերապատրաստումների և ֆինանսավորման, արագ միկրովարկերի անհասանելիությունը): Ստորև ներկայացված աղյուսակը ամփոփում է Հայաստանում գենդերային տարբեր տեսակի սահմանափակումները վայրի հավաքի արժեշղթայում՝ Վայրի հավաքի արժեշղթայի վերլուծությունը-Հայաստան (Համաշխարհային բանկ, 2016):

Վայրի հավաքի արժեշղթայում գենդերային տարբեր տեսակի սահմանափակումներ

Ծավալ	Դիտարկված և չափելի անհավասար պայմաններ	Նկատվող գենդերային տարբերությունների պատճառ հանդիսացող գործոններ	Գենդերային հիմքով սահմանափակումների առնչությամբ պնդումներ
Պրակտիկա և մասնակցություն	Կանայք ակտիվ մասնակցություն ունեն արժեշղթայի տարբեր փուլերում՝ բերքահավաքից մինչև բերքի իրացումը շուկայում: Նրանք, ի տարբերություն տղամարդկանց, սահմանափակ հասանելիություն ունեն վերապատրաստումներին և դասընթացներին գյուղական համայնքներում տրանսպորտային համակարգի, անբավարար ենթակառուցվածքների և տնային գործերով գերծանրաբեռնված լինելու պատճառով:	Կանայք հիմնականում ներկայացված են արժեշղթայի արտադրության փուլում: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, նրանք ներգրավված չեն արժեշղթայի այն փուլերում, որտեղ եկամուտ է գոյանում, կամ ավելացված արժեք կուտակվում: Նրանք չունեն մարքեթինգային հմտություններ և ղեկավարման առանձնահատկություններ՝ արտադրանքի իրացման հարցում տղամարդկանց հավասար հաջողություններ գրանցելու համար:	Արժեշղթայի զարգացումն ինքնին կբարելավի կանանց տնտեսական վիճակը, քանի որ նրանք ակտիվորեն ներգրավված են արժեշղթայի գրեթե բոլոր փուլերում: Կանայք կարող են ավելի հաջողել և տնտեսապես ավելի հզորանալ ընտրված արժեշղթայի շնորհիվ, եթե վերապատրաստումներ և հավելյալ դասընթացներ անցնելու հավասար հնարավորություններ ունենան: Նրանք պետք է զարգացնեն իրենց մարքեթինգային և առաջնորդական հմտությունները:
Ակտիվների հասանելիություն	Չնայած օրենքը տղամարդկանց և կանանց համար սահմանում է սեփականության հավասար իրավունքներ, սեփականության իրավունքով տարածք ունեցող կանանց թիվը անհամեմատ փոքր է տղամարդկանց թվից: Ժառանգական իրավունքները սովորաբար հօգուտ տղամարդկանց են աշխատում: Որդիներն են դառնում տարածքների և այլ տեսակի կապիտալի օրինական տերերը: Կանայք լուրջ ֆինանսական և վարկային խնդիրների են բախվում գրավի բացակայության պատճառով:	1990-ական թվականների սեփականաշնորհման գործընթացներից հետո կանայք գյուղական բնակավայրերի հողերի օրինական համասեփականատերեր դարձան: Այնուամենայնիվ, փաստացի բոլոր որոշումները՝ կապված հողատարածքի օգտագործման հետ, ընդունվում էին բացառապես տղամարդկանց կողմից: Տղամարդկանց և կանանց տրված «բնական» դերերի մասին հասարակական նորմերի համաձայն՝ կանայք շարունակում են ունենալ տնտեսապես ստորադաս դեր: Բանկերից վարկ ստանալու համար անհրաժեշտ է, որ կանայք երաշխավոր ունենան:	Կենսական ակտիվներին մուտք ունենալու կանանց հիմնական սահմանափակումները պայմանավորված են մի կողմից ժառանգության սովորույթներով և իրավունքներով, մյուս կողմից էլ գենդերային դերերի նորմալ համարվող ընկալումներով և հասարակական նորմերով:

Համոզմունքներ և ընկալումներ	Տղամարդկանց և կանանց պատշաճ դերերի մասին ավանդական կարծրատիպերը գերակշռում են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Կանայք հիմնականում ընկալվում են որպես մայր, կին և խնամակալ, իսկ տղամարդիկ՝ որպես հաց հայթայթողներ: Չնայած որ Հայաստանը տղամարդկանց և կանանց կրթության հավասար պայմաններ ապահովելու առումով բարձր հորիզոնական է զբաղեցնում, կարիերայի առաջխաղացման և բարձր պաշտոններ զբաղեցնելու հարցում կանայք բախվում են ավելի շատ խնդիրների, քան տղամարդիկ:	Գենդերային պատշաճ դերերի վերաբերյալ ավանդական կարծրատիպերը գերակշռում են ոչ միայն տղամարդկանց շրջանում, այլ նաև կանանց: Կանանց տնտեսապես անբարենպաստ վիճակը շոշափելիորեն սահմանափակում է նաև հասարակական կյանքում նրանց ակտիվ դերակատարությունը:	Համոզմունքները և գենդերով պայմանավորված դերերը չեն նպաստում տղամարդկանց և կանանց հավասար հնարավորություններ ունենալուն և՛ տնտեսապես, և՛ որոշումներ կայացնելու լիազորություններ ունենալու առումով: Կանանց տնտեսական իրավիճակի բարվոքումը աստիճանաբար կբարելավի նրանց՝ որոշումներ կայացնելու հնարավորությունները համայնքներում և հասարակության ավելի լայն շրջանակներում:
Օրենքներ, քաղաքականություններ և հաստատություններ	Օրենքները և կարգավորումները հավասար հնարավորություններ են ընձեռում երկու սեռերի համար: Օրենքի կիրառման կամ այլ հարակից քաղաքականությունների մեջ չկան խտրական մոտեցումներ: Հիմնական խտրական ներգործություններն առաջ են գալիս այս օրենքների և կանոնակարգերի թերի կիրառման հետևանքով:	Խտրականության օրենքների և կարգավորումների արդյունավետ կիրառման հիմնական խոչընդոտը հասարակական նորմերն են և ժառանգական իրավունքները հողատարածքի կամ այլ տեսակի կապիտալի նկատմամբ:	Կանանց իրավիճակը կարող է բարելավվել, եթե տղամարդկանց և կանանց պատշաճ դերի, իրավունքների և պարտականությունների վերաբերյալ նորմերը ժամանակի ընթացքում փոխվեն:

Աղբյուրը՝ Wild Harvest Value Chain Analysis - Armenia (World Bank, 2016)

2018 թվականին Համաշխարհային բանկի կողմից պատվիրված և ICARE-ի կողմից կազմված այս և սրան հաջորդող զեկույցները ներկայացնում են վայրի հավաքի ոլորտում գենդերային նշված բացը լրացնելու առաջարկություններ, որոնք այստեղ մանրամասնորեն կրկնելու կարիք չկա. դրանք, սակայն, կարող են ամփոփվել ստորև: Այնուամենայնիվ, առաջարկություններից մի քանիսը նոր են և ներկայացված չեն վերը նշված երկու զեկույցներում:

1. Նպաստել **կանանց ցանցերի ստեղծմանը** ինչպես ոչ պաշտոնական միավորների, այնպես էլ կոոպերատիվների, ասոցիացիաների, դաշինքների և այլնի միջոցով: Սա կնպաստի ընտրված արժեշղթայում մասնակից կանանց փոխհարաբերությանը և համագործակցությանը:

2. Առաջարկել վերապատրաստումներ առաջնորդության, մարքեթինգի, որոշումների կայացման, ֆինանսական կառավարման և ռիսկի դիմելու հմտությունների ու կարողությունների թեմաներով:

3. Առաջարկել **վերապատրաստումներ վայրի բույսերի կայուն հավաքի, արժեքի ավելացմամբ մշակման և ապրանքի ստեղծման թեմաներով**: Վերապատրաստումները կարող են ներառել վայրի հավաքի արդյունքում առաջացած այնպիսի ենթամթերքների (դեղաբույսերի ցողուններ կամ հատապտուղների/մրգերի սերմեր) ավելի արդյունավետ օգտագործում, որոնք սովորաբար վատնվում են: Եթե դրանք վերամշակվեն և դառնան եթերայուղեր, ապա կարող են հավելյալ եկամուտ ապահովել արժեշղթայի բոլոր մասնակիցների համար: Ավելին, վայրի հավաքի միջազգային ստանդարտների կիրառումը կարող է ավելի մեծ եկամուտներ ստանալու հնարավորություններ տալ: Նմանատիպ ստանդարտների կիրառման համար վերապատրաստումների կարիք կլինի:

4. Խթանել **կանանց սեփականություն համարվող և նրանց կողմից կառավարվող բիզնեսների** ստեղծումը: Սրանցից որոշները շուկայի մատակարարողների հատվածում:

5. Առաջարկել **հատուկ կանանց համար մշակված ֆինանսական պրոդուկտներ և ծառայություններ,** օրինակ՝ հեշտ մարվող միկրովարկեր՝ համապատասխան տեխնիկական և ֆինանսական կառավարման աջակցությամբ: Ըստ համաշխարհային փորձի՝ կանանց տրամադրվող վարկերի մարումը իրականացվում է շատ ավելի արագ տեմպով, քան տղամարդկանց տրամադրվող վարկերի մարումը:

6. Քաղաքականության կամ ծրագրերի վերաբերյալ **պաշտոնական որոշումներ կայացնելու գործընթացում ավելի մեծ թվով կանանց ներգրավել**՝ այսպիսով մեծացնելով նրանց մասնաբաժինը և հետաքրքրվածությունը կարևոր վերջնարդյունքներին հասնելու գործում:

7. Ուսումնասիրել **կանանց պատկանող բիզնեսը կամ արտադրությունը որպես բրենդինգ ներկայացնելու հնարավորությունը**, մասնավորապես արտասահմանյան և Հայաստանի մասնագիտացված շուկաներում:

8. **Գենդերային իմաստով զգայուն պրակտիկաները և քաղաքականությունները** պետք է կիրառվեն զարգացման նախաձեռնությունների ամբողջ ընթացքում, օրինակ՝ վերապատրաստումների, բիզնեսի զարգացման, ֆինանսավորման և այլնի:

7. Հանրային կրթություն, վերապատրաստում և տարբեր ուղղություններով իրազեկության բարձրացում

Կրթության, վերապատրաստման և տարբեր ուղղություններով իրազեկության բարձրացման կարիք կա:

Ա. Հավաք իրականացնողների ցանցը, քաղաքացիական հասարակության խմբերը, համալսարանները կարող են **կազմակերպել աշխատաժողովներ և առցանց դասընթացներ ու սեմինարներ** հետևյալ թեմաներով՝

- կայուն հավաքի հմտություններ և պրակտիկա,
- վայրի բույսերի հավաքի հետ կապված հավելյալ արժեքի ավելացնող ծառայություններ,
- բնական ռեսուրսների մշտադիտարկում և կառավարում տեղական համայնքային մակարդակում և
- վայրի բույսերի բաշխման և առատության քարտեզագրում մեկուսացված և հազվագյուտ բույսերի պոպուլյացիաների համար և զգայուն բնական միջավայրի առանձնացում, համայնքներում կենսաբազմազանության արտադրանքների հավաք իրականացնողների տվյալների բազայի ստեղծում և հատուկ պահպանվող տարածքներում հավաքի կարգավորում՝ հատուկ շեշտադրելով տեղի պաշտպանությունը փորձագետների օժանդակությամբ:

Բ. Դիտարկել **հանրային միջոցառումների և փառատոնների կազմակերպումը**, որտեղ վայրի բույսերի հավաք իրականացնող կանայք կարող են ներկայացնել հավաքի իրենց պրակտիկան և վերամշակման/պատրաստման հմտությունները: Այս միջոցառումների շրջանակներում կարելի է նաև ներառել օճառների, հոմեոպատիկ միջոցների, խմիչքների պատրաստումը, խոհանոցային ավանդույթներ և այլն: Նմանատիպ միջոցառումների միջոցով կարելի է խթանել կայուն հավաքի և պատասխանատու սպառման պրակտիկաները:

Գ. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և համալսարանները պետք է **աշխատեն վերամշակողների կամ մանրածախ վաճառք իրականացնողների հետ կայուն արտադրության և հավաքի ստանդարտները ընդունելու և խթանելու համար**, ներառյալ պիտակները, որոնք

համապատասխանում են «կանաչ» արտադրանքի վաճառքին և մարքեթինգին, այդ թվում՝ վայրի հավաքի:

Դ. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են աշխատել լրատվական միջոցների հետ՝ պատասխանատու սպառման վերաբերյալ **իրազեկության բարձրացումը խթանելու համար**, քանի որ այն կապված է վտանգված կամ Կարմիր գրքում ներառված տեսակների վայրի հավաքի և պաշտպանության հետ:

Ե. Դպրոցական երեխաները կամ երիտասարդների խմբերը վայրի բույսերի հավաք իրականացնելու, վերամշակելու և օգտակար արտադրանք ստանալու նպատակով կարող են մասնակցել **դասարանային և արտադասարանային գործունեությանը**՝ կիրառելով կայուն մոտեցումներ: Նրանք կարող են ընտանիքի անդամներից ավանդական գիտելիքներ հավաքել և դրանք ներկայացնել այնպիսի հարթակներում, ինչպիսին է https://1000leaf.aua.am/-ը:

- Առկա կամ նոր օրենքների կիրառման կատարելագործման համար շատ հաճախ անհրաժեշտ է վերապատրաստում՝ վտանգված կամ Կարմիր գրքում ներառված տեսակների հավաքի ռիսկի նվազեցնելու նպատակով: Վտանգված տեսակների նույնականացման համար անհրաժեշտ կլինի լիազոր անձանց վերապատրաստում իրազեկության և բարձրացում (ներառյալ շրջակա միջավայրի տեսուչների, անտառապահների և հարկադիր կատարողների): Նշվածներից մեծ մասը կարելի է իրականացնել առցանց կրթական մոդուլների միջոցով, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրող բջջային հավելվածներով:

Հավելվածներ

Հավելված 1. Գրիգորյան, Հեղինե (2020). Բուսական աշխարհի օբյեկտների հավաքման ոլորտի օրենսդրության և ինստիտուցիոնալ կառուցվածքի վերլուծություն. *ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն.*

Հավելված 2. Էլակէօզ, Վահրամ (2020). Վայրի բույսերի հավաքը Հայաստանում. Ակնարկ կենսաբանական բազմազանության կարգավորման, պահպանության, պաշտպանության և օգտագործման վերաբերյալ կառավարության ռազմավարությունների և ոլորտի մասին. *ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն.*

Հավելված 3. Աշխատաժողով՝ բազմաշահառու խմբերի մասնակցությամբ

Հավելված 1

Բուսական աշխարհի օբյեկտների հավաքման ոլորտի օրենսդրության և ինստիտուցիոնալ կառուցվածքի վերլուծություն

6/15/2020

ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն

Հեղինե Գրիգորյան

Պատրաստվել է «Հայաստանում վայրի բույսերի հավաքի կառավարում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է Հայաստանում ԱՄՆ դեսպանության դրամաշնորհի շրջանակներում

Հապավումներ

ԲՀՊՏ – բնության հատուկ պահպանվող տարածք

ՀՀ ՎԻՎՕ – Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք

ՄԱԶԾ – Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր

ՊՈԱԿ – պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՏԻՄ – տեղական ինքնակառավարման մարմին

Ներածություն

1. Սույն վերլուծության նպատակն է ներկայացնել ՀՀ-ում բուսական աշխարհի օբյեկտների հավաքման և ոլորտի ինստիտուցիոնալ կառուցվածքի ուղղված իրավական լուծումների մշակման սկզբունքային մոտեցումներ, որոնք կներկայացվեն որոշում ընդունողներին, բիզնեսին, քաղաքացիական հասարակությանը և այլ շահառուներին:

2. Առաջարկվող մոտեցումները հիմնված են միջազգային փորձի և ՀՀ գործող օրենսդրության վերլուծության վրա՝ հաշվի առնելով նաև ՀՀ էկոլոգիական և հարակից օրենսդրության առանձնահատկությունները:

3. Սույն վերլուծության շրջանակներում առաջարկվող մոտեցումները ներկայացնում են իրավական կարգավորման որոշակի ուղղություններ, որոնք կարող են դառնալ լայն քննարկման առարկա և հիմք ծառայել համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու համար:

4. Ներկայումս ՀՀ-ում բուսական աշխարհի օբյեկտների հավաքումն իրականացվում է տարերայնորեն, առանց օրնեսդրությամբ սահմանված պահանջների պահպանման: Նման պրատկիտկան հանգեցնում է կենսապաշարների ոչ կայուն օգտագործման, միաժամանակ չեն վճարվում պետական սեփականություն համարվող պաշարների օգտագործման համար սահմանված բնօգտագործման վճարները:

5. Բուսական աշխարհի օբյեկտների հավաքն իրականացվում է ինչպես անտառներում և ԲՀՊՏ-ներում, այնպես էլ պետական ու համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական և այլ նշանակության հողերում[4]: Ի տարբերություն անտառներում և ԲՀՊՏ-ներում իրականացվող հավաքի որոշակի իրավական կարգավորվածության, պետական ու համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական և այլ նշանակության հողերում այդ հարաբերությունները դուրս են մնացել օրենսդրական կարգավորումից:

6. Անտառային և հատուկ պահպանվող տարածքների հողերում չընդգրկված պետական և համայնքային սեփականություն համարվող հողերում բուսական աշխարհի օբյեկտների քանակի/ծավալի և դրանց հավաքի վերաբերյալ ելակետային տվյալները բացակայում են: Սույն ծրագրի ընդգրկումը հնարավորություն չի տալիս այդպիսի գնահատում և

[4] Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի (ՀՀ կառավարության 03.10.2019թ. N 1379 որոշում) ավելի քան 68 տոկոսը հանդիսանում են գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր: Վերոնշյալ հողատեսքերի 51 տոկոսը կազմում են արոտավայրերը, իսկ 6 տոկոսը բնական խոտհարքները: Ընդ որում, ըստ սեփականության ձևի համայնքային և պետական սեփականություն են հանդիսանում արոտավայրերի 97 տոկոսը, խոտհարքների 55 տոկոսը, իսկ մնացածը հանդիսանում են մասնավոր սեփականություն: Բնական կերհանդակները դիտարկվում են հիմնականում որպես խոշոր և մանր եղջերավոր կենդանիների կերի ապահովման աղբյուր և օգտագործման իրավական կարգավորումները (ոչ լիարժեք) վերաբերվում են այս դաշտին: Մինչդեռ այս էկոհամակարգերը մատուցում են մի շարք այլ ծառայություններ, այդ թվում ապահովող ծառայություններ՝ հանդիսանալով սննդի, դեղաբույսերի, տեխնիկական բույսերի աղբյուր: Այստեղ աճում են նաև բազմաթիվ էնդեմիկ, ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ տեսակներ: Այս տարածքներում բույսերի հավաքն իրականացվում է առանց բնօգտագործման վճարի, տարերայնորեն, առավել ևս առանց հաշվի առնելու բուսական պաշարների վերարտադրության բնական հնարավորությունները:

ուսումնասիրություն կատարելու, որը հիմք կհանդիսանար նաև իրավական վերլուծության համար: Բացի այդ, գյուղատնտեսական նշանակության հողերում աճեցվող բույսերը «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ չեն համարվում բուսական աշխարհի օբյեկտներ, ուստիև դուրս են սույն վերլուծության բովանդակային սահմաններից: Իհարկե, այս հարցերի ուսումնասիրությունը կարող է օգնել պատկերացում կազմելու շուկայի կառուցվածքի և շուկայում սպառվող բույսերի ծավալում անտառային ֆոնդի հողերից դուրս գտնվող հողերից մթերվող մասնաբաժնի մասին և կարող է լինել լրացուցիչ ուսումնասիրության առարկա:

7. Վերոգրյալ խնդիրը ցույց է տալիս, որ օրենսդրությամբ սահմանված կանոնները ու պահանջները պատշաճորեն չեն կատարվում, ինչը վկայում է իրավակարգավորման ոչ արդյունավետ լինելու, ինչպես նաև վերահսկողության հետ կապված խնդիրների մասին: Ուստի անհրաժեշտ է վերագնահատել դրանց արդյունավետությունը և վերանայել գործող մոտեցումները իրավակարգավորման արդյունավետությունը բարձրացնելու և գոյություն ունեցող մթերման պրակտիկան իրավական դաշտ բերելու համար:

Բուսական աշխարհի օբյեկտների հավաքման ոլորտի ՀՀ օրենսդրությունը

8. ՀՀ-ում բուսական աշխարհի օբյեկտների հավաքման ոլորտի հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ[5], ՀՀ անտառային օրենսգրքով[6], ՀՀ հարկային օրենսգրքով[7], ՀՀ քաղաքացիական օրենսգրքով[8], Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով[9], «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքով[10], «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքով[11], «Բնապահպանական վերահսկողությամ մասին» ՀՀ օրենքով[12], «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքով[13], «Դեղերի մասին» ՀՀ օրենքով[14], ինչպես նաև ՀՀ կառավարության մի շարք որոշումներով ու այլ նորմատիվ իրավական ակտերով:

9. Ստորև ներկայացված է հիմնական օրենսդրական ակտերով կարգավորվող իրավահարաբերությունների շրջանակը բուսական աշխարհի օբյեկտների հավաքման համատեքստում:

---

[5] Ընդունվել է 06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ.1118:
[6] Ընդունվել է 24.10.2005թ., ուժի մեջ է մտել 17.12.2005թ., ՀՀՊՏ 2005.12.07/75(447) Հոդ.1432:
[7] Ընդունվել է 04.10.2016թ., ուժի մեջ է մտել 01.01.2018թ., ՀՀՊՏ 2016.11.04/79(1259) Հոդ.1038:
[8] Ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):
[9] Ընդունվել է 06.12.1985թ., ուժի մեջ է մտել 01.06.1986թ., ՀՍՍՀԳՍՏ 1985/23:
[10] Ընդունվել է 23.11.1999թ., ուժի մեջ է մտել 27.12.1999թ., ՀՀՊՏ 1999.12.27/31(97) :
[11] Ընդունվել է 27.11.2006թ., ուժի մեջ է մտել 04.01.2007թ., ՀՀՊՏ 2006.12.25/66(521) Հոդ.1363:
[12] Ընդունվել է 11.04.2005թ., ուժի մեջ է մտել 28.05.2005թ., ՀՀՊՏ 2005.05.18/28(400) Հոդ.548:
[13] Ընդունվել է 03.05.2005թ., ուժի մեջ է մտել 18.06.2005թ., ՀՀՊՏ 2005.06.08/35(407) Հոդ.625:
[14] Ընդունվել է 17.05.2016թ., ուժի մեջ է մտել 15.12.2016թ., ՀՀՊՏ 2016.06.15/47(1227) Հոդ.549:

ՀՀ Սահմանադրություն

10. ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն՝ «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունը ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին»: Սահմանադրական այս նորմը ուղղակիորեն չի անդրադառնում բուսական աշխարհի օբյեկտների հավաքմանը, սակայն դրա ընգրկուն ձևակերպումը ներառում է նաև բնօգտագործման այս ձևը:

ՀՀ անտառային օրենսգիրք

11. ՀՀ անտառային օրենսգիրքը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և **արդյունավետ օգտագործման,** ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

12. ՀՀ անտառային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ **պտուղների, հատապտուղների, ընկույզների, սնկերի, բույսերի և դեղաբույսերի, տեխնիկական հումքի մթերումն ու անտառից դուրսբերումը համարվում է ոչ բնափայտային անտառանյութի մթերում:** Անտառներում ոչ բնափայտային անտառանյութերի մթերումը կարգավորվում է **կողմնակի անտառօգտագործման** վերաբերյալ կանոններով (հոդվ.38):

ՀՀ հարկային օրենսգիրք

13. ՀՀ հարկային օրենսգիրքը կարգավորում է ՀՀ-ում կիրառվող հարկերի և **վճարների** հետ կապված հարաբերությունները, սահմանում է ՀՀ հարկային համակարգի սկզբունքները, հարկի և **վճարի հասկացությունները,** տեսակները, **վճարողների շրջանակը,** հարկի դրույքաչափերը, հարկի հաշվարկման, վճարման, իսկ օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հարկային պարտավորությունների գանձման կարգն ու ժամկետները, ինչպես նաև հարկային արտոնությունները:

14. ՀՀ հարկային օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում կիրառվող պարտադիր վճարի տեսակներից է նաև **բնօգտագործման վճարը,** որը պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ և համալիր օգտագործման, ինչպես նաև բնական պաշարների օգտագործումը փոխհատուցելու նպատակով այդ պաշարների օգտագործման համար ՀՀ պետական բյուջե վճարվող վճար է (հոդվ. 197 1-ին մաս):

Օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ կենսապաշարները համարվում են **բնօգտագործման վճարի օբյեկտ:**

15. ՀՀ հարկային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ **կենսապաշարների օգտագործման համար բնօգտագործման վճար վճարողներ են համարվում ՀՀ բուսական և կենդանական աշխարհի օբյեկտ հանդիսացող կենսապաշարներն օգտագործողները:**

16. ՀՀ հարկային օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ կենսապաշարների օգտագործման համար բնօգտագործման վճարի բազա են համարվում բուսական և կենդանական աշխարհի օբյեկտ հանդիսացող՝ փաստացի օգտագործված կենսապաշարի ծավալը, քաշը, միավորը (հատը) կամ չափման այլ ֆիզիկական բնութագրիչը:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք

17. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ի թիվս այլ իրավահարաբերությունների, կարգավորում է իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև առաջացող առևտրային հարաբերությունները, այդ թվում նաև՝ բուսական աշխարհի օբյեկտների հավաքման մասով: Օրենսգիրքը սահմանում է առուծախի ու վարձակալության (օր.՝ անտառում որշակի տարածքի վարձակալություն) հարաբերությունները և այդքանով կիրառելի է նաև բուսական աշխարհի օբյեկտների հավաքման և իրացման նկատմամբ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք

18. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը (ՀՀ ՎԻՎՕ) պատասխանատվություն է նախատեսում **ինքնագլուխ վայրի պտուղներ, ընկույզ, սունկ, հատապտուղ հավաքելու համար:** Մասնավորապես՝ ՀՀ ՎԻՎՕ 72-րդ հոդվածի համաձայն՝

«Ինքնագլուխ վայրի պտուղներ, ընկույզ, սունկ, հատապտուղ և այլն հավաքելը այն անտառամասերում, որտեղ դա արգելված է կամ թույլատրվում է միայն անտառատոմսով՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Վայրի պտուղներ, ընկույզ հատապտուղ և այլն հավաքելը դրանք հավաքելու համար սահմանված ժամկետների և եղանակների խախտմամբ՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի[15] հնգապատկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով»:

19. ՀՀ ՎԻՎՕ 93-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերը հավաքելու համար, մասնավորապես՝

Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված բույսերը, կամ այդպիսի բույսերի արմատները, ծաղիկները, պտուղները ինքնագլուխ հավաքելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրհինսնապատիկի չափով:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք

20. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը կարգավորում է բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության ոլորտի հասարակական հարաբերությունները: Օրենքը սահմանում է նաև մի շարք կարևոր հասկացություններ, որոնցից սույն վերլուծության համատեքստում առավել կարևոր են հետևյալները.

անհետացման եզրին գտնվող բույս՝հազվագյուտ բուսական տեսակ, որի առանձնյակների քանակը ժամանակի ընթացքում շարունակական կրճատվում է.

բույսերի կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությանների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին.

բուսական աշխարհ՝ ծառերի, թփերի, խոտաբույսերի (այդ թվում՝ մամուռների, գետնամուշկերի, ձիաձետների և պտերների), ինչպես նաև ջրիմուռների, սնկերի և քարաքոսերի տեսակների ու դրանց համակեցությունների ամբողջականությունը բնական պայմաններում.

բուսական պաշար՝ աշխարհագրական որոշակի տարածքում առկա բուսական տեսակների և համակեցությունների օգտագործման ենթակա քանակություն:

---

[15] «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տուգանքների համար որպես հաշվարկային հիմք ընդունվում է 1000 ՀՀ դրամը:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք

21. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման ոլորտի իրավահարաբերությունները:

22. Օրենքի 16-րդ հոդվածի գ) կետի համաձայն՝ պետական արգելոցներում և ազգային պարկերի արգելոցային գոտիներում արգելվում է բույսերի, ծաղիկների, պտուղների և սերմերի մթերումը, բացի արգելոցի տարածքի գիտական հետազոտություններ համար նախատեսված հավաքածուների հավաքից:

«Բնապահպանական վերահսկողությամ մասին» ՀՀ օրենք

23. Օրենքը կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները և սահմանում ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների և բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

24. Օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ կետը սահմանում է բուսական աշխարհի օգտագործման և պահպանության ոլորտում վերահսկողության ուղղությունները, մասնավորապես՝ *բուսական աշխարհի օբյեկտների պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության համար սահմանված պահանջների կատարումը, Կարմիր գրքում գրանցված բույսերի, ինչպես նաև բուսական համակեցությունների պահպանության համար սահմանված պահանջների պահպանումը, բուսական աշխարհի օբյեկտների աճելավայրերի պահպանության համար սահմանված պահանջների պահպանումը, բուսական աշխարհի օբյեկտների գյուղատնտեսական, արդյունագործական և սոցիալական նպատակներով օգտագործման պահանջների պահպանումը:*

25. Նշված ուղղություններով վերահսկողություն իրականացնում է ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը:

«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենք

26. Օրենքը սահմանում է բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագները և դրա հաշվարկման ու գանձման կարգը: Պտուղների, հատապտուղների, սնկերի, սերմերի, դեղաբույսերի և այլ օգտակար բույսերի ինքնակամ հավաքի դեպքում վնասների հատուցման սակագները սահմանված են յուրաքանչյուր կիլոգրամի կամ այլ ֆիզիկական միավորի համար: Առավել բարձր սակագներ են սահմանված ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակները ոչնչացնելու կամ դրանք ապօրինի հավաքելու դեպքում:

«Դեղերի մասին» ՀՀ օրենք

27. Օրենքը կարգավորում է ՀՀ-ում դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի շրջանառության հետ կապված հարաբերությունները՝ բնակչությանն անվտանգ, արդյունավետ, որակյալ, մատչելի դեղերով և դրանց մասին հավաստի տեղեկատվությամբ ապահովելու նպատակով, ինչպես նաև սահմանում է ՀՀ իրավասու մարմինների և դեղերի շրջանառության սուբյեկտների լիազորություններն այդ ոլորտում:

28. Օրենքով սահմանվող հասկացություններից սույն վերլուծության համատեքստում կարևոր են հետևյալները՝

դեղանյութ՝ դեղեր պատրաստելու կամ արտադրելու համար օգտագործվող **դեղաբուսական** կամ իմունաբանական կամ նյութափոխանակային ակտիվությամբ օժտված մարդկային (մարդու արյուն, արյան պատրաստուկ, մարդկային ծագման այլ նյութեր) և (կամ) կենդանական (միկրոօրգանիզմ, ինտակտ կենդանի, օրգանների մասեր, կենդանիների արտազատուկներ, տոքսիններ, հանուկներ, արյունից ստացված արտադրանք, կենդանական ծագման այլ նյութեր) և (կամ) **բուսական (միկրոօրգանիզմներ, բույսեր, բույսերի մասեր, բուսական արտազատուկներ, հանուկներ, բուսական ծագման այլ նյութեր)** և (կամ) քիմիական (տարրեր, բնական քիմիական նյութեր, քիմիական փոխակերպման կամ սինթեզի արդյունքում ստացված քիմիական արտադրանք, քիմիական ծագման այլ նյութեր) ծագման նյութ.

դեղաբուսական հումք՝ չմշակված, չորացված կամ թարմ վիճակում դեղեր պատրաստելու կամ արտադրելու համար օգտագործվող ամբողջական, մասնատված կամ կտրված բույսեր, բույսերի առանձին հատվածներ կամ ջրիմուռներ կամ սնկեր կամ քարաքոսներ.

դեղաբույսերի պատշաճ մշակման և հավաքման գործունեություն՝ որակի ապահովման համակարգի բաղադրիչ, որով երաշխավորվում է դեղաբուսական հումքի որակը բուսական դեղի անփոփոխ արտադրության համար:

29. Դեղաբույսերի պատշաճ մշակման և հավաքման գործունեության կարգը սահմանված է «Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշմամբ[16]:

Բուսական աշխարհի օբյեկտների հավաքման (կողմնակի անտառօգտագործման) թույլտվություն

30. **Ներկայումս փաստացիորեն անտառներում և ԲՀՊՏ-ներում բուսական աշխարհի օբյեկտների մթերումն իրականացվում է հիմնականում անտառամերձ բնակավայրերի բնակիչների կողմից առավելապես առանց համապատասխան թույլտվությունների (կողմնակի անտառօգտագործման պայմանագիր և անտառային տոմս)[17]: Առանց համապատասխան թույլտվության մթերված բարիքները ծառայում են ոչ միայն անձնական կարիքների, այլ նաև շահույթ ստանալու համար. իրացվում են ճանապարհների եզրերին, հանձնվում են մթերող և վերամշակող կազմակերպություններին, ինչպես նաև մանրածախ առևտրի ցանցերին և խանութներին: Առանց թույլտվույթունների և առանց պատշաճ վերահսկողության իրականացվող մթերումը վտանգ է ներկայացնում անտառային պաշարների պահպանության և դրանց վերարտադրությունն ապահովելու տեսանկյունից, ինչի արդյունքում կարող են խախտվել էկոհամակարգերը և վերանալ առանձին տեսակներ:**

31. Ակնհայտ է, որ հատկապես անտառամերձ բնակավայրերում բնակչության ավանդական զբաղմունքները կապված են անտառի և դրա բարիքներն օգտագործելու հետ, որոնք կենսական, սոցիալական խնդիրներ են լուծում, առավել ևս, որ այդ բնակավայրերում առկա է զբաղվածության լուրջ խնդիր, և եկամուտ ստեղծելու հնարավորությունները խիստ սահմանափակ են: **Ուստի բուսական աշխարհի օբյեկտների հավաքման ոլորտի հարաբերությունների կանոնակարգումը պետք է հիմնվի այնպիսի լուծումների վրա, որոնք հավելյալ սոցիալական բեռ և ավելորդ վարչարարություն չեն ստեղծի տեղի բնակիչների համար:**

32. Հաշվի առնելով իրացման շղթայում ներգրավված օղակների առանձնահատկությունները (վերամշակող կազմակերպություններ, առևտրային ցանցեր, մանրածախ առևտրի կետեր)՝ **անհրաժեշտ է միասնականացված պարզ մոտեցում, որը ընդունելի և կիրառելի կլինի բոլորի սուբյեկտների համար:**

33. Պետական սեփականություն համարվող կենսապաշարների օգտագործումը, համաձայն ՀՀ անտառային օրենսգրքի վճարովի է և կարող է իրականացվել համապատասխան թույլտվության առկայության դեպքում: «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում բուսական աշխարհի պետական սեփականություն համարվող օբյեկտների օգտագործումն արդյունագործական

[16] Ընդունվել է 25.11.2010թ., ուժի մեջ է մտել 01.01.2011թ., ՀՀՊՏ 2010.12.22/64(798) Հոդ.1493:
[17] An Assessment of Wildlife Trade in Armenia with Recommendations for Interventions: Final report: September 2015 – February 2016. FPWC and Fauna&Flora International, էջեր 2, 7, 11, 40-42:

(ոչ տնային) նպատակով վճարովի է և համարվում է լիցենզավորված գործունեություն: Միակ բացառությունը սահմանված է ՀՀ անտառային օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն՝ քաղաքացիներն իրավունք ունեն ազատորեն՝ **առանց որևէ թույլտվության,** գտնվելու պետության և համայնքի սեփականության ներքո գտնվող անտառներում՝ հանգստի, **անձնական օգտագործման նպատակով վայրի պտուղ, հատապտուղ, ընկույզ, սունկ և բույսեր հավաքելու համար,** բացառությամբ օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերի: Հարկ է նշել, որ որևէ իրավական ակտով սահմանված չէ, թե մթերված պաշարի որ քանակը կարող է համարվել անձնական օգտագործման համար:

34. Վերոգրյալից բացի, պետական և համայնքային սեփականության[18] ներքո գտնվող անտառներում, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների անտառածածկ հատվածներում («Հայանտառ» ՊՈԱԿ-ի կառավարման կազմում գտնվող արգելավայրերը) բուսական աշխարհի օբյեկտների հավաքումն իրականացվում է կողմնակի անտառօգտագործման կանոնների համաձայն:

35. ՀՀ անտառային օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անտառային հողերում առանց անտառին վնաս պատճառելու կարող են իրականացվել **ոչ բնափայտային անտառանյութի՝ պտուղների, հատապտուղների, ընկույզների, սնկերի, ուտելի բույսերի և դեղաբույսերի, տեխնիկական հումքի մթերում,** ինչպես նաև մեղվանոցների, փեթակների տեղադրում, խոտհունձ և արածեցում՝ **անտառօգտագործման պայմանագրի և անտառային տոմսի հիման վրա:** «Պետական և համայնքային անտառային հողերում կողմնակի անտառօգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N159-Ն հրամանով[19] հաստատվել է կողմնակի անտառօգտագործման իրականացման կարգը, թույլտվություններ ստանալու ընթացակարգը: Նշված կարգը գործում է նաև բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ) անտառապատ հատվածներում:

36. ՀՀ գյուղատնտեսության նախարարի N159-Ն հրամանի համաձայն՝ կողմնակի անտառօգտագործում կարող է իրականացվել 2 եղանակով՝ 1. առանց անտառային հողերի նկատմամբ իրավունքի ձեռքբերման և 2. անտառային հողերի վարձակալությամբ: Ցանկացած պարագայում արդյունագործական նպատակով կողմնակի անտառօգտագործումը պետք է իրականացվի անտառկառավարման պլանների հիման վրա:

37. ՀՀ գյուղատնտեսության նախարարի N159-Ն հրամանի 10-րդ կետի համաձայն՝ կողմնակի անտռօգտագործման հաշվառումը պարտավոր է իրականացնել համապատասխան անտառտնտեսությունը՝ անհրաժեշտ տվյալները լրացնելով հաշվառման գրքում: Գրանցման ենթակա են՝ *մթերման համար թույլատրված պահաբաժինը, քառակուսին,*

---

[18] ՀՀ-ում համայնքային սեփականության ներքո գտնվող անտառներ դեռևս գոյություն չունեն:
[19] Ընդունվել է 18.09.2012թ., ուժի մեջ է մտել 25.11.2012թ., ՀՀՊՏ 2012.11.15/28(411) Հոդ.278:

տեղամասը և մակերեսը, անտառային տոմսի համարը և անտառօգտագործման ժամկետը:

38. Կողմնակի անտառօգտագործման մասով հակասական կարգավորումներ են առկա ՀՀ անտառային օրենսգրքի 38-րդ հոդվածի և «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի միջև: Մասնավորապես՝ ՀՀ անտառային օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն՝ կողմնակի անտառօգտագործումը, այդ թվում՝ վայրի բույսերի, պտուղների ու հատապտուղների մթերումն իրականացվում է անտառային տոմսի և անտառօրգագործման պայմանագրի հիման վրա: Մինչդեռ «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը նախատեսում է, որ ՀՀ-ում բուսական աշխարհի պետական սեփականություն համարվող օբյեկտների օգտագործումն արդյունագործական (ոչ տնային) նպատակով վճարովի է և համարվում է լիցենզավորված գործունեություն: «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքում նման դրույթի առկայությունը ենթադրում է համապատասխան կարգավորումներ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում[20], որոնք բացակայում են: Հատկանշական է, որ «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի գործողությունը տարածվում է ոչ միայն անտառներում, այլ նաև դրանցից դուրս աճող վայրի տեսակների վրա, սակայն անկատար իրավակարգավորման հետևանքով այդ տեսակների հավաքի համար լիցենզիա չի տրամադրվում և բնօգտագործման վճար չի վճարվում: Լիցենզավորման պահանջի մասով սահմանված հակասական և կիսատ կարգավորումն անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել, քանի որ նշված գործունեության համար քաղաքացիներին լիցենզավորման գործընթաց անցնելու պահանջով ծանրաբեռնելն ավելորդ է, և վստահաբար հանգեցնելու է սահմանված պահանջի բազմակի խախտումների: Հետևաբար՝ իրավակարգավորման նման մոտեցումը հիմնավորված չէ:

39. Ներկայումս լրամշակման փուլում գտնվող «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին« ՀՀ օրենքի նախագծով[21] ծավալուն փոփոխություններ են նախատեսվում գործող օրենքում: Մասնավորապես՝ լիցենզավորման պահանջը նախատեսվում է փոխարինել թույլտվություն ստանալու պահանջով, ինչի շնորհիվ կվերանա վերոգրյալ իրավական անհամապատասխանությունը: Այդուհանդերձ, հարկ ենք համարում նշել, որ նախագծի կարգավորումից դուրս է մնացել համայնքային սեփականություն համարվող տարածքում բուսական աշխարհի օբյեկտների օգտագործման կարգավորումը: Ու թեև, «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը ՏԻՄ լիազորությունների մասով հղում է անում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքին, բայց այստեղ ևս համայնքային սեփականության ներքո գտնվող տարածքներում բուսական աշխարհի օբյեկտների օգտագործումը կարգավորված չէ:

---

[20] Ընդունվել է 30.05.2001թ., ուժի մեջ է մտել 08.08.2001թ., ՀՀՊՏ 2001.08.08/26(158) Հոդ.581:

[21] https://www.e-draft.am/projects/598/about

40. Հարկ է նշել, որ ներկայումս ՀՀ որևէ անտառային տնտեսության համար դեռևս հաստատված կառավարման պլան չկա: Կառավարման պլանների մշակման աշխատանքներն ընթացքի մեջ են, դրանք իրականացվում են ՄԱԶԾ-ի և ՀՀ պետական բյուջեի միջոցներով: Նախատեսվում է, որ ՀՀ բոլոր անտառտնտեսությունների կառավարման պլանների մշակման աշխատանքները կավարտվեն 2021 թվականին: Ինչ վերաբերում է ԲՀՊՏ-ներին, ապա ընդունված է միայն «Դիլիջան» ազգային պարկի կառավարման պլանը[22], իսկ մյուսները նախատեսվում է ընդունել 2021-2022 թվականներին:

41. Ատառկառավարման պլանների և ԲՀՊՏ-ների կառավարման պլանների հաստատումից բացի, չափազանց կարևոր նշանակություն ունի այդ տարածքների սահմանների ճշգրտումը, ինչը կարևոր է կառավարող և վերահսկող սուբյեկտի իրավասության սահմանը հստակեցնելու համար: Ներկայումս առկա են բավականին լուրջ անճշտություններ կադաստրային քարտեզների և անտառային տնտեսությունների քարտեզների միջև: Անկախությունից ի վեր անտառների պետական հաշվառում չի իրականացվել, իսկ այդ 3 տասնամյակների ընթացքում ապօրինի օտարումների արդյունքում պակասել են անտառային ֆոնդի հողերը, որոշ հատվածներում կատարվել են ապօրինի կառուցապատման աշխատանքներ, անասնագլխաքանակի պակասելու հետևանքով առանձին հատվածներում անտառը բնական վերաճի արդյունքում «գրավել է» համայնքների հողերը: Նմանատիպ անճշտությունների ծավալը կազմում է շուրջ 30.000 հա:

42. Գործնականում կողմնակի անտառօգտագործման թույլտվությունն ուղղված է հետևյալ խնդիրների լուծմանը՝ *ա. ապահովել պետականսեփականություն համարվող կենսապաշարների մթերման դիմաց բնօգտագործման վճարի գանձումը, և բ. ապահովել էկոհամակարգերի պահպանութունն ու կենսապաշարների կայուն օգտագործումը:* Դրանով հանդերձ, պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված խնդիրների կատարումը գործող իրավակարգավորման պայմաններում հնարավոր չէ: Դա պայմանավորված է *նախ, անտառից օգտվող բնակչության սոցիալական վիճակը չբարդացնելու նկատառումով, և երկրորդ, պատշաճ հսկողություն և վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայությամբ[23]:*

43. Վերոգրյալից բացի, հարկ է փաստել, որ ներկայում բացակայում են նաև խնդրո առարկա պաշարների ծավալների վերաբերյալ հստակ գնահատումներ, ինչը հնարավորություն կտա պատկերացում կազմելու այդ պաշարների տնտեսական արժեքի վերաբերյալ: Նախատեսվում է, որ նոր մշակվող անտառկառավարման պլաններում պետք է ամրագրվեն անտառների էկոհամակարգային ծառայությունների գնահատման գործողություններ, որոնք թույլ կտան հստակ պատկերացում կազմել կենսապաշարների

[22] Ընդունվել է 23.02.2017թ., ուժի մեջ է մտել 19.03.2017թ., ՀՀՊՏ 2017.03.09/15(1290) Հոդ.226:
[23] Ավելի մանրամասն տես «Վերահսկողություն և պատասխանատվություն» գլխում:

տնտեսական արժեքի և դրանց արդյունավետ օգտագործման հնարավորությունների վերաբերյալ:

44. Հաշվի առնելով անտառամերձ համայնքների բնակչության՝ երակմուտներ ստեղծելու սահմանափակ հնարավորությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ անտառային տարածքներում կողմնակի անտառօգտագործման նկատմամբ պատշաճ հսկողություն և վերահսկողություն իրականացնելու համար անհամեմատ ավելի մեծ ռեսուրսներ կարող են պահանջվել, քան կկազմի գանձված բնօգտագործման վճարը, **նպատակահարմար ենք գտնում դիտարկել բուսական աշխարհի օբյեկտների մթերման դեպքում, եթե այդ գործունեությունն իրականացվում է առանց անտառի նկատմամբ իրավունք ձեռք բերելու, թույլտվություն ստանալու պահանջը վերացնել հնարավորությունը՝ անկախ մթերման ծավալներից:** Այս մոտեցումը կարող է լրացուցիչ խթան դառնալ ապօրինի անտառահատումների նվազեցման համար:

45. Միաժամանակ, հաշվի առնելով հազվագյուտ տեսակների պահպանության և կենսապաշարների կայուն օգտագործման անհրաժեշտությունը, **առաջարկում ենք մշակել և իրականացնել կողմնակի անտառօգտագործմամբ զբաղվող անձանց համար նախատեսված իրազեկման միջոցառումներ, որոնց միջոցով անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ կփոխանցվեն բնակիչներին:** Զուգահեռաբար անհրաժեշտ կլինի կատարելագործել սահմանված կանոնների խախտման համար պատասխանատվության ինստիտուտը:

46. Հարկ է նկատել, որ կողմնակի անտառօգտագործման թույլտվություն ստանալու պահանջի վերացման դեպքում «Հայանտառը» ՊՈԱԿ-ը կարող է առավել շահագրգիռ լինել իրականացնելու մթերում և վաճառելու կամ վերամշակելու մթերված ապրանքները: Ներկայում, թեև «Հայանտառ» ՊՈԱԿ-ին օրենսդրությամբ վերապահված է նման գործառույթ, սակայն այն չի իրականացվում:

47. Առանձին դեպքերում քաղաքացիները արդյունագործական ծավալներով պտուղներ, հատապտուղներ և բույսեր աճեցնում են իրենց հողամասերում, ուստի այս դեպքերում նրանք ազատորեն, առանց որևէ թույլտվության տնօրինում են բերքը: Սակայն այն դեպքերում, երբ սեփական հողմասերում քաղաքացիներն աճեցնում են հազվագյուտ կամ Կարմիր գրքում գրանցված տեսակներ, **անհրաժեշտ կլինի, որպեսզի այդ փաստը հավաստվի ՏԻՄ կողմից տրամադրված համապատասխան տեղեկանքով, որի պատճենը (լուսանկարը) պետք է առկա լինի նաև վերջնական իրացնողի մոտ:** Նմանատիպ կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է անտառներում և ԲՀՊՏ-ներում արգելված կամ մթերման սահմանափակումներ ունեցող տեսակների հավաքը համապատասխանաբար բացառելու կամ կանոնակարգելու նկատառումով:

48. Նշված տեղեկանքի տրամադրումը գործնականում չի զուգորդվի լրացուցիչ բարդություններով, քանի որ համայնքի ղեկավարը պարտավոր է իրականացնել համայնքի ցամաքային ծածկույթի ամենամյա հաշվառում համայնքի հողային հաշվեկշիռը

կազմելու համար, ուստի ՏԻՄ-ը տնօրինում է համայնքի տարածքում գտնվող բոլոր հողամասերի, դրանց մակերեսի, նպատակային և գործառնական նշանակության, ինչպես նաև մշակվող տեսակների վերաբերյալ համակարգված տեղեկատվության:

Բնօգտագործման վճարների կիրառման առանձնահատկությունները և խնդիրները անհատ մթերողների, վերամշակող ընկերությունների և առևտրային ցանցերի մասով

49. ՀՀ հարկային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ կենսապաշարների օգտագործման համար բնօգտագործման վճար վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության բուսական և կենդանական աշխարհի օբյեկտ հանդիսացող կենսապաշարներն օգտագործողները, այսինքն՝ անմիջապես մթերողները:

50. Ինչպես արդեն նշվել է, անտառամերձ համայնքների բնակիչներից բնօգտագործման վճարի գանձումը նպատակահարմար չէ: Ինչ վերաբերում է վերամշակող ընկերություններին, առևտրային ցանցերին և մանրածախ խանութներին, ապա վերջիններիցս գնված կենսապաշարի համար բնօգտագործման վճար գանձելու անհրաժեշտությունը պարզելու համար կարևոր են հետևյալ հարցերի պատասխանները.

    1) ի՞նչ ծավալի կենսապաշար են ձեռք բերում վերամշակող ընկերությունները և մանրածախ առևտրի ցանցերը.

    2) նշված ընկերությունների կողմից ձեռք բերվող կենսապաշարների ո՞ր մասն է կազմում անտառներից և ԲՀՊՏ-ներից մթերվածը, և ո՞ր մասը սեփական հողամասերում աճեցվածը.

    3) վերամշակող ընկերությունների և մանրածախ առևտրի ցանցերի կողմից ձեռք բերվող կենսապաշարների դիմաց վճարվելիք բնօգտագործման վճարի հանրագումարը արդյո՞ք արդարացնում է այն լրացուցիչ ծախսերն ու վարչարարությունը, որոնք առաջանալու են բիզնեսի համար, և այն ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են, որպեսզի իրավասու պետական մարմինները վերահսկողություն իրականացնեն խնդրո առարկա կենսապաշարների մթերման համար բնօգտագործման վճարի հաշվարկման և վճարման նկատմամբ.

    4) ի՞նչ ազդեցություն կունենա բիզնեսի, հատկապես՝ փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման վրա ընկերություններին պարտադիր վճարի նոր տեսակով ծանրաբեռնելը:

51. Վերոգրյալ հարցերի հստակ պատասխանները առանցքային կողմնորոշիչներ կարող են լինել վերամշակող ընկերություններից և առևտրային ցանցերից բնօգտագործման վճար գանձելու անհրաժեշտությունը հիմնավորելու կամ հերքելու համար: Հետևաբար, անհրաժեշտ ենք գտնում համապատասխան տնտեսագիտական, այդ թվում՝ շուկայի

կառուցվածքի վերլուծություն կատարել, որի արդյունքները կկանխորոշեն բնօգտագործման վճարի գանձման կարգի վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:

Այլ տնտեսական գործիքներ

52. Կենսապաշարների մթերման ոլորտում բնօգտագործման վճարի գանձումը ՀՀ-ում օրենսդրությամբ ամրագրված միակ տնտեսական գործիքն է: Այս առնչությամբ պետք է նշել, որ բնօգտագործման ոլորտում կիրառվող տնտեսական գործիքների կիրառման հնարավորությունները, որոնք կապված են էկոհամակարգային ծառայությունների մատուցման հետ, բավականին լայն են: Հավելենք, որ հայաստանյան պրակտիկայում այս հնարավորությունները որոշակիորեն թերագնահատված են:

53. Այդուհանդերձ, Հայաստանում էկոհամակարգային ծառայությունների կամավոր վճարների համակարգի ներդրման ուղղությամբ շրջակա միջավայրի նախարարության և միջազգային գործընկերների հետ համատեղ իրականացվել են մի շարք ուսումնասիրություններ, ինչպես նաև կոնկրետ համայնքում էկոհամակարգային ծառայությունների վճարների համակարգի ներդրման հնարավորության ուսումնասիրության պիլոտային ծրագիր: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

54. Անտառներում և ԲՀՊՏ-ներում բուսական աշխարհի օբյեկտներ հավաքելը էկոհամակարգային ծառայության տեսակ է (ապահովող ծառայությունների խմբից), հետևաբար՝ որպես այդպիսին տվյալ ծառայությունն ունի որոշակի տնտեսական արժեք: Եվ որպեսզի նշված բարիքների տնտեսական արժեքը հնարավոր լինի փոխակերպել շահույթի, անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան տարածքների կառավարումն իրականցնող կառույցները («Հայանտառ» ՊՈԱԿ-ը և ԲՀՊՏ-ների կառավարումն իրականացնող ՊՈԱԿ-ները) պատրաստ են լինեն իրենց ներդրումն ունենալու, որպեսզի այդ ծառայությունները առավել որակյալ ու մատչելի դառնան օգտվողներին (օր.՝ իրականացվի վնասատուների դեմ պայքար և այլ անհրաժեշտ աշխատանքներ, հասանելի լինի անհրաժեշտ տեղեկատվություն, նշված լինեն երթուղիներ, ապահովված լինեն անվտանգության որոշակի կանոններ, հրապարակվի տեղեկատվություն այն տեսակների մասին, որոնց մթերումն արգելված է կամ առկա է սեզոնային սահմանափակում և այլն): Այլ կերպ ասած, կառավարում իրականացնող կառույցները պետք է ունենան համապատասխան կարողություններ լրացուցիչ ծառայություններ մատուցելու համար: Ընդ որում, լրացուցիչ ծառայությունների շարքում կարող է դիտարկվել նաև ապրանքների բրենդավորման գաղափարը[24]:

[24] Անտառից հավաքված պտուղները, հատապտուղները, դեղաբույսերը և այլ մթերքներ ակնհայտ մրցակցային առավելություն ունեն, հետևաբար՝ դրանք կարող են կրել համապատասխան անտառային տնտեսության տարբերանշանով պիտակ, որը ապրանքը ճանաչելի կդարձնի և հավելյալ արժեք կհաղորդի:

55. Այսպիսի մոդելների մշակման և կիրառության մեջ դնելու համար **անհրաժեշտ է մշակել հստակ ռազմավարություն՝ համապատասխան գործողությունների ծրագրով, որը կներառի ինչպես անհրաժեշտ գնահատումների իրականացման, ենթակառուցվածքների զարգացման, այնպես էլ բնակչության իրազեկման և անտառային տարածքները կառավարող կառույցների կարողությունների ձևավորման գործողություններ:**

56. Վերոգրյալ մոդելի կիրառման դեպքում ևս, մեր համոզմամբ, այդ ծառայությունների համար վճարելու պարտականությունը չպետք է ուղղակիորեն դրվի անտառամերձ համայնքների բնակիչների վրա: Փոխարենը հարկ է դիտարկել մի կողմից անտառամերձ համայնքների ՏԻՄ-երի[25] կամ վերամշակող ընկերությունների ու առևտրային ցանցերի և մյուս կողմից «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև համապատասխան իրավապայմանագրային դաշտի ստեղծումը, որի շրջանակներում սահմանված կանոններով և ծավալներով բնակիչները կիրականացնեն մթերում և համապատասխան բարիքները կհանձնեն այդ կազմակերպություններին:

57. Էկոհամակարգային ծառայությունների զարգացման վերաբերյալ ՀՀ-ում ընդունվել են հայեցակարգային փաստաթղթեր («Բնապահպանության ոլորտի նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման հայեցակարգին հավանություն տալու մասին»[26]և «Բնապահպանության ոլորտի նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման հայեցակարգից բխող խնդիրների իրականացման միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին»[27] ՀՀ Կառավարության արձանագրային որոշումները), սակայն այդ ուղղությամբ միջոցառումների ծրագրի գործողության ժամանակահատվածում (2015-2018) գործնական քայլեր չեն կատարվել: Էկոհամակարգային ծառայությունների ինստիտուտի կիրառման գաղափարը ներդրված է նաև «Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագծում[28], որի լրամշակված տարբերակը դեռևս պաշտոնական շրջանառության մեջ չի դրվել:

58. Բուսական աշխարհի օբյեկտներ հավաքելը, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի համաձայն, արգելված է պետական արգելոցների, ինչպես նաև ազգային պարկերի արգելոցային տարածքներում, ու չնայած օրենսդրական արգելքին, նշված տարածքներում այնուամենայնիվ իրականացվում է մթերում: Այս իրողության գլխավոր պատճառը եկամտի այլընտրանքային աղբյուրների բացակայությունն է կամ խիստ սահմանափակ լինելը, ուստի **ապօրինի մթերման համար**

---

[25] Առաջին հայացքից ՏԻՄ-ի կողմից էկոհամակարգային ծառայության համար վճարելը, որը մատուցվում է բնակիչներին, կարող է չհիմնավորված թվալ, բայց կայուն մթերում և որակյալ ծառայություններ ապահովելու դեպքում, հատկապես անտառների մոտ գտնվող սահմանամերձ բնակվայրերի բնակիչների համար այս կառուցակարգի կիրառումը կարող է էական սոցիալական աջակցություն լինել՝ նպաստելով այդ բնակավայրերից արտագաղթի կանխմանը:

[26] Ընդունվել է 25.04.2013թ., ուժի մեջ է մտել 30.04.2013թ., չի հրապարակվել:

[27] Ընդունվել է 14.11.2013թ., ուժի մեջ է մտել 14.11.2013թ., չի հրապարակվել:

[28] http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=03&month=09&year=2019&NewsID=11954&lang=arm

պատասխանատվություն կիրառելուց բացի, անհրաժեշտ է նաև համապատասխան միջոցառումներ մշակել բնակչության կենսական պահանջմունքների բավարարման, ինչպես նաև փոքր ու միջին ձեռնարկատիրությունը զարգացնելու ուղղությամբ:

59. Վերոգրյալի նպատակով **նախ** անհրաժեշտ է հատկորոշել այն համայնքները, որոնք գտնվում են պետական արգելոցների և ազգային պարկերի արգելոցային գոտիների մերձակայքում, և որոնց բնակչության հիմնական զբաղմունքներից է այդ տարածքներում բուսական աշխարհի օբյեկտներ հավաքելը: **Երկրորդ,** անհրաժեշտ է ընտրել համապատասխան համայնքներում ներդրումային ծրագրերի լավագույն տարբերակները և **երրորդ,** բանկերի և վարկային կազմակերպությունների հետ համատեղ մշակել սուբսիդավորվող, արտոնյալ վարկային ծրագրեր: Ընդ որում, **կարևոր է, որ վարկային ծրագրի արտոնյալ պայմանների գործողությունը ուղղակիորեն կապված լինի վարկառուի կողմից անտառօգտագործման կանոնները չխախտելով, և հակառակ դեպքում այդ պայմանները դադարեն:**

60. Այս առաջարկի կենսագործումը կարող է մեկնարկել համապատասխան պիլոտային դրամաշնորհներով, որպիսի փորձ արդեն իսկ եղել է 2019թ.-ին Հաղարծին և Թեղուտ համայնքներում՝ ուղղված ապօրինի անտառահատումների կանխարգելմանը, և WWF Հայաստանի հետ համատեղ շուրջ 150.000.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 52 դրամաշնորհային ծրագրեր են իրականացվել, որոնց արդյունքում ստեղծվել են բավականին հաջողված բիզնեսներ, իսկ ապօրինի հատումներն էականորեն կրճատվել են:

Վերահսկողություն և պատասխանատվություն

61. Ինչպես արդեն նշվել է, ՀՀ-ում բուսական աշխարհի օբյեկտների հավաքման կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնում է ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, որը իրավասու է խախտումներ հայտնաբերելու դեպքում արձանագրել դրանք և իրավախախտի նկատմամբ կիրառել վարչական պատասխանատվության միջոցներ:

62. Ընդ որում, անտառներում և ԲՀՊՏ-ներում հսկողություն են իրականացնում համապատասխան ՊՈԱԿ-ների աշխատակիցները՝ անտառապահները, սակայն վերջիններս իրավասու չեն խախտումներ հայտնաբերելու դեպքում պատասխանատվության միջոց կիրառել: Նրանք պարտավոր են այդ դեպքերում տեղեկացնել ՀՀ ոստիկանությանը կամ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի համապատասխան տարածքային բաժնի տեսուչներին:

63. ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2019 թվականի տարեկան հաշվետվությունը[29] բավականաչափ մանրամասն չէ պատկերացում կազմելու համար, թե բուսական աշխարհի օբյեկտների մթերման կանոնների պահպանության մասով

[29] https://www.ecoinspect.am/wp-content/uploads/2020/06/hashvetvutyun_2019.pdf

իրականացված վերահսկողությունն ինչ արդյունքներ է տվել: Հաշվետվությունում ներկայացված տվյալները ընդհանրացված են «բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն» վերնագրի ներքո, որն առավելապես վերաբերում է ապօրինի հատումներին, համապատասխանաբար՝ նշանակված տուգանքները ևս կապված են այդ իրավախախտումների հետ:

64. Հարկ է արձանագրել, որ բուսական աշխարհի օբյեկտների հավաքման նկատմամբ վերահսկողությունը բավականին բարդ է այն առումով, որ իրավախախտման փաստը կատարման պահին չարձանագրելու դեպքում, հաճախ անհնար է ֆիքսել, թե ինչ քանակի բուսական աշխարհի օբյեկտներ են հավաքվել, ի տարբերություն ապօրինի հատումների, երբ դրանից հետո մնում են կոճղեր, սղոցի և մեքենայի անվադողերի հետքեր և այլ նշաններ:

65. **Արգելված և սեզոնային սահմանափակում ունեցող տեսակների հավաքման, ինչպես նաև արգելված տարածքներում հավաք իրականացնելու նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով** անհրաժեշտէ համապատասխան փոփոխություն կատարել ՀՀ ՎԻՎՕ 72-րդ հոդվածում՝ **«Ինքնագլուխ վայրի պտուղներ, ընկույզ, սունկ, հատապտուղ հավաքելը»:** Մասնավորապես՝ առաջարկում ենք հոդվածի վերնագրից և տեքստից հանել «ինքնագլուխ» հավաքելու պահանջը, քանի որ թույլտվություն ստանալու պահանջի վերացումը ենթադրում է բոլորի համար նման գործունեություն իրականացնելու հնարավորություն՝ սահմանված այլ կանոնների պահպանմամբ:

66. ՀՀ ՎԻՎՕ-ն լիարժեք չի կարգավորել նաև Կարմիր գրքում գրանցված բույսերի հավաքման և իրացման դեպքում պատասխանատվության հարցը: Խնդիրն այն է, որ ՀՀ ՎԻՎՕ 93-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում միայն **ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր հավաքելու** համար, մինչդեռ դրանք **իրացնելու համար որևէ պատասխանատվություն նախատեսված չէ:** Նման մոտեցումը ստեղծում է արատավոր շղթա, և վաճառողները (ովքեր կարող են լինել նաև հենց հավաքողները) չեն կարող ենթարկվել պատասխանատվության (օր.՝ գարնանը Երևանի կենտրոնում Կարմիր գրքում գրանցված ձնծաղիկների վաճառքը):

67. Վերոգրյալ բացը լրացնելու **անհրաժեշտ ենք համարում համապատասխան լրացում կատարել ՀՀ ՎԻՎՕ 93-րդ հոդվածում՝ նախատեսելով պատասխանատվություն նաև Կարմիր գրքում գրանցված տեսակների իրացման համար:** Ընդ որում, անհրաժեշտ է վերապահում նախատեսել այն դեպքերի համար, երբ համապատասխան բույսերն աճեցվել են սեփականության կամ այլ հիմքով օգտագործվող հողամասում, և այդ մասին առկա համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանք:

Իրավասու մարմինների համակարգը և լիազորությունները

68. Ստորև բերվող աղյուսակում քարտեզագրված են բուսական աշխարհի օբյեկտների պահպանության, պաշտպանության, պաշարների հաշվառման և կադաստրի վարման,

օգտագործման և վերահսկողության ոլորտում գործող պետական մարմինների լիազորությունները:

	ՀՀ Կառավարություն	ՀՀ ԿԱ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	Բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության վարչություն	Լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչություն	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտե	*«Հայանտառ» ՊՈԱԿ (ղեկավարվում է Անտառային կոմիտեի կողմից)*	Տարածքային կառավարման մարմիններ	ՏԻՄ-եր
Քաղաքականության մշակում	- պետական քաղաքականության իրականացման ապահովումը. - բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության պետական քաղաքականության իրականացում. -		- բուսական աշխարհի, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների, անտառների կայուն կառավարման, պահպանության, պաշտպանության և բնական պաշարների ողջամիտ օգտագործման ու վերարտադրության ոլորտի քաղաքականության ծրագրերի ու ռազմավարությունների մշակումը և դրանց իրականացման գործընթացի ապահովումն ու վերլուծությունը. - շրջակա միջավայրի պահպանության և բնական պաշարների բանական օգտագործման ու վերարտադրության տնտեսական մեխանիզմների և	- ապահովում է կենսաբազմազանության կայուն կառավարման քաղաքականության, ռազմավարությունների, ծրագրերի մշակումը և դրանց իրականացման գործընթացը.					

	ՀՀ Կառավարություն	ՀՀ ԿԱ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	Բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության վարչություն	Լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչություն	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտե	*«Հայանտառ» ՊՈԱԿ (ղեկավարվում է Անտառային կոմիտեի կողմից)*	Տարածքային կառավարման մարմիններ	ՏԻՄ-եր
			գործիքակազմի մշակումը.						
Ծրագրերի մշակում	- անտառային ոլորտում պետական ծրագրերի հաստատումը. - բուսական պաշարների պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում պետական ծրագրերի (այսուհետ՝ պետական ծրագրեր) հաստատում.			- ներկայացնում է կենսաբազմազանության և բնության հատուկ պահպանվող տարածքների բնապահպանական, սոցիալական և տնտեսական ներուժի պահպանության, զարգացման և հավասարակշռման ուղղությամբ առաջարկություններ, իրականացնում է ծրագրերի մշակում և դրանց իրականացմանն ուղղված միջոցառումների մոնիթորինգ.		- մշակում է անտառային պաշարների արդյունավետ օգտագործման ծրագրեր՝ համագործակցելով նաև միջազգային համապատասխան կառույցների հետ. - մշակում և կազմակերպում է անտառային հողերում հրդեհային անվտանգության, ինչպես նաև վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագրերը. - մշակում և իրականացնում է ներդրումային ծրագրեր պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում.		- պետական ծրագրերի մշակմանը մասնակցություն և իր իրավասության սահմաններում դրանց իրականացում.	
Պահպանություն և	- բուսական աշխարհի		- ՀՀ բույսերի ու կենդանիների	- իրականացնում է Հայաստանի Հանրապետությա				- բնության հատուկ պահպանվող	- օրենքով սահմանված կարգով

	ՀՀ Կառավարություն	ՀՀ ԿԱ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	Բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության վարչություն	Լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչություն	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտե	*«Հայանտառ» ՊՈԱԿ (ղեկավարվում է Անտառային կոմիտեի կողմից)*	Տարածքային կառավարման մարմիններ	ՏԻՄ-եր
պաշտպանություն	օբյեկտների պահպանության և օգտագործման կարգի սահմանում. - բույսերի Կարմիր գրքի և դրա մեջ գրանցված բույսերի ցանկի հաստատում.		կարմիր գրքերի վարումը.	ն բույսերի Կարմիր գրքի վարումը.				տարածքների (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), ինչպես նաև բուսաբանական այգիների և դենդրոպարկերի պահպանության աջակցություն. - բուսական աշխարհի պաշտպանության և վերարտադրության նպատակով միջոցառումների իրականացում՝ համաձայնեցնելով այդ բնագավառում լիազորված մարմնի հետ.	հսկողություն է իրականացնում համայնքի սեփականություն հանդիսացող հողերում բնապահպանական միջոցառումների իրականացման նկատմամբ.
Օգտագործում և թույլտվություններ	- բուսական պաշարների օգտագործման ենթակա օբյեկտների ցանկի, վճարի չափի		- միասնական համակարգի միջոցով շրջակա միջավայրի պահպանության և բնական պաշարների օգտագործման	- մասնակցում է կենսաբազմազանության պահպանության և կենսառեսուրսների կառավարման ողջամիտ օգտագործման ու	- բուսական աշխարհի օբյեկտների օգտագործման թույլտվությունների տրամադրում և պայմանագրերի կնքում	- կազմակերպում է պետական անտառային տնտեսությունների վարումը. - իրականացնում է պետական անտառների	- անտառային պաշարների արդյունավետ օգտագործման միջոցառումների իրականացումը.		

	ՀՀ Կառավարություն	ՀՀ ԿԱ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	Բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության վարչություն	Լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչություն	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտե	*«Հայանտառ» ՊՈԱԿ (ղեկավարվում է Անտառային կոմիտեի կողմից)*	Տարածքային կառավարման մարմիններ	ՏԻՄ-եր
	և գանձման կարգի հաստատում.		ոլորտում թույլտվությունների, պայմանագրերի, տրամադրումը.	վերականգնման տնտեսական մեխանիզմների մշակման աշխատանքներին.		տիրապետումը և օգտագործումը. - իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով անտառների կամ անտառային հողերի նկատմամբ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի ձեռքբերման հայտերի ընդունումը և մրցույթների կազմակերպումը, համաձայնության տրամադրումը.	- անտառային տնտեսության վարման հետ կապված արտադրական և դրանց օժանդակ օբյեկտների կառուցումը.		
Կադաստր, մոնիթորինգ, հաշվառում	- բուսական աշխարհի մոնիտորինգի կազմակերպման և իրականացման կարգի սահմանում. - բուսական աշխարհի կադաստրի վարման կարգի սահմանում.		- բուսական աշխարհի, ներառյալ՝ բնության հատուկ պահպանվող տարածքների և դենդրոպարկերի, անտառների, որսորդական տնտեսությունների կադաստրի վարումը, հաշվառումը և մոնիթորինգի իրականացումը.		- վայրի բուսական պաշարների գույքագրում և մոնիթորինգ, տեղեկատվական բանկի ու կադաստրի վարման գործընթացի ապահովում	- կազմակերպում է անտառների և անտառային հողերի պետական հաշվառումը և վարում է անտառային պետական կադաստրը.			- իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը, ցամաքային տարածքի ծածկույթի ընթացիկ դասակարգումը և կազմում է

	ՀՀ Կառավարություն	ՀՀ ԿԱ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	Բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության վարչություն	Լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչություն	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտե	*«Հայանտառ» ՊՈԱԿ (ղեկավարվում է Անտառային կոմիտեի կողմից)*	Տարածքային կառավարման մարմիններ	ՏԻՄ-եր
			- բնական պաշարների կադաստրների ստեղծումը և դրանց վարումը.						համայնքի հողային հաշվեկշիռը.
Վերահոս կողություն		- բուսական աշխարհի օբյեկտների պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության համար սահմանված պահանջների կատարումը, - բուսական աշխարհի օբյեկտների՝ Հայաստանի Հանրապետությունից արտահանման, Հայաստանի Հանրապետություն դրանց ներմուծման սահմանված պահանջների պահպանումը, - Կարմիր գրքում գրանցված բույսերի, ինչպես նաև բուսական համակեցությունն							

	ՀՀ Կառավարություն	ՀՀ ԿԱ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	Բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության վարչություն	Լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչություն	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտե	*«Հայանտառ» ՊՈԱԿ (ղեկավարվում է Անտառային կոմիտեի կողմից)*	Տարածքային կառավարման մարմիններ	ՏԻՄ-եր
		երի պահպանության համար սահմանված պահանջների պահպանումը, - բուսական աշխարհի օբյեկտների աճելավայրերի պահպանության համար սահմանված պահանջների պահպանումը, - բուսական աշխարհի օբյեկտների գյուղատնտեսական, արդյունագործական և սոցիալական նպատակներով օգտագործման պահանջների պահպանումը,							

Տեղական ինքնակառավարման մարմինների դերակատարությունը

69. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում ՏԻՄ իրավասությունների սահմանումը վերապահում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքին[30], որը, սակայն, նշված բնագավառում ՏԻՄ-ի որևէ լիազորություն չի սահմանել:

70. Պետք է փաստել, որ ներկայում ՏԻՄ-երի կարողությունները և ռեսուրսները գործնականում բավարար էլ չեն բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում որոշակի աշխատանքներ իրականացնելու համար:

71. Այդուհանդերձ ՏԻՄ-երը առանցքային դերակատարություն կարող են ունենալ հատկապես անտառամերձ համայնքներում բնակչության կողմից բուսական աշխարհի օբյեկտների հավաքումը սահմանված պահանջներին համապատասխան կազմակերպելու տեսանկյունից: Այս առումով **ՏԻՄ-երը՝ որպես բնակչության հետ ամենօրյա շփում ապահովող կառույցներ, կարող են արդյունավետ կերպով իրականացնել բնակչության իրազեկումը հավաքման կանոնների, հավաքման ենթակա տեսակների, ինչպես նաև գործող սահմանափակումների և արգելքների, ինչպես նաև սահմանված կանոնները խախտելու դեպքում նախատեսված պատասխանատվության վերաբերյալ:**

72. Իրազեկման նպատակով կարող են լայնորեն օգտագործվել ՏԻՄ-երի ինտենետային կայքերը, ինչպես նաև սոցիալական ցանցերում գործող էջերը, որոնց հասանելիությունը շարունակաբար ընդլայնվում է, և դրանք դառնում են տեղեկատվության տարածման, թեև ոչ պաշտոնական, սակայն առավել օպերատիվ ու արդյունավետ աղբյուրներ:

73. Մինչ այժմ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և ՏԻՄ-երի միջև համագործակցություն այս համատեքստում չի իրականացվել: Նման փորձ չի եղել նաև ապօրինի անտառահատումների դեմ պայքարի շրջանակներում, մինչդեռ իրազեկման այս հնարավորությունների օգտագործումը չափազանց կիրառական ու արդյունավետ է, իսկ իրականացումը լրացուցիչ նյութական ռեսուրսներ չի պահանջում: Այս իմաստով **անհրաժեշտ ենք համարում համապատասխան պայմանավորվածություններ ձեռք բերել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի համապատասխան մասնաճյուղերի և անտառամերձ համայնքների ՏԻՄ-երի միջև:**

[30] Ընդունվել է 07.05.2002թ., ուժի մեջ է մտել 21.06.2002թ., ՀՀՊՏ 2002.06.21/21(196) Հոդ.473:

74. Իրազեկման միջոցառումներից բացի, ՏԻՄ-երը կարող են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կամ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ համագործակցությամբ **կազմակերպել պրակտիկ դասընթացներ բնակիչների համար բուսական աշխարհի օբյեկտների կայուն հավաքման կանոնների վերաբերյալ:**

75. Հաշվի առնելով մթերվող բուսական աշխարհի օբյեկտների ծավալները, ինչպես նաև դրանց իրացման հնարավորությունները՝ ՏԻՄ-երը կարող են **համայնքի զարգացման ծրագրում ներառել շուկայի զարգացման համար անհրաժեշտ համայնքային ենթակառուցվածքների ստեղծումը և ներդրողների ներգրավումը, օրինակ՝ չրերի, հյութերի, ոգելից խմիչքների ու պահածոների արտադրամասության, լոգիստիկ ցանցի ստեղծման և համայնքում այլ տնտեսական կարողությունների ձևավորման ուղղությամբ:**

Հավելված 1. Իրավական ակտերի ցանկ

1. ՀՀ անտառային օրենսգիրք
2. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք
3. ՀՀ հարկային օրենսգիրք
4. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
5. ՀՀ հողային օրենսգիրք
6. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք
7. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք
8. «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք
9. «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենք
10. «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենք
11. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք
12. «Դեղերի մասին» ՀՀ օրենք
13. «Բուսական աշխարհի պետական կադաստրի վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
14. «Բուսական աշխարհի պետական կադաստրի տվյալների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
15. «Բուսական աշխարհի մոնիթորինգի կազմակերպման իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
16. «Բուսական աշխարհի պետական հաշվառման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
17. «Պետական անտառները և անտառային հողերն օգտագործման տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
18. «Սահմանային և ռազմական նշանակության անտառների ու անտառային հողերի օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

19. «Պաշտպանական նշանակության անտառներում անտառօգտագործման և պահպանության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

20. «Արտադրական նշանակության անտառներում անտառօգտագործման և պահպանության կարգը սահմանելու, ՀՀ կառավարության 2001 թվականի հունվարի 23-ի N49 որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2006 թվականի սեպտեմբերի 7-ի N 1412-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

21. «Պետական անտառների օտագործման՝ անտառահատման և անտառային տոմսերի ձևերը և տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրաման

22. «Պետական և համայնքային անտառային հողերում կողմնակի անտառօգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրաման

23. «Սահմանամերձ տարածքներից ներմուծվող գյուղատնտեսական, անտառային ու գեղազարդային բույսերի և բուսական արտադրանքի անվանացանկը և քանակները հաստատելու մասին» ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրաման

Հավելված 2

Վայրի բույսերի հավաքը Հայաստանում. Ակնարկ կենսաբանական բազմազանության կարգավորման, պահպանության, պաշտպանության և օգտագործման վերաբերյալ կառավարության ռազմավարությունների և ոլորտի մասին

Վահրամ Էլակեոս, փ.գ.դ., Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոն (հունիս, 2020)

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է կենսաբազմազանությանն առնչվող՝ մի շարք միջազգային բնապահպանական պայմանագրեր, կոնվենցիաներ, ինչպես նաև դրանց արձանագրությունները[31]: Դեռևս 1999 թվականին մշակվել և *«Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարություն* է ներկայացվել *«Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը»* (այսուհետ՝ ԿՌԳԾ): Գործողությունների ծրագրի ընդունումից հետո Կառավարությունը ԿՌԳԾ-ին առնչվող փաստաթղթերն ընդունելու պարտավորություն է ստանձնել: Դրանք ներառում են հետևյալը.

ա) օրենսդրության և կառավարման շրջանակի բարելավում.

բ) բնության հատուկ պահպանվող նոր տարածքների (ԲՀՊՏ) ստեղծում.

գ) կենսաբազմազանության հաշվառման և մոնիթորինգի մեխանիզմների ներդրման համար նախադրյալների ստեղծում.

դ) գիտական հետազոտությունների ընդլայնում. և

ե) հասարակության իրազեկության բարձրացման և բնապահպանական կրթության աշխատանքների իրականացում[1]:

Կառավարությունը նաև կարևորում է կենսաբազմազանության դերը էկոհամակարգայինծառայությունների ապահովման մեջ, մասնավորապեսհողակլիմայական պայմանների կարգավորման, մաքուր ջրի տրամադրման, բնական աղետների հետևանքների մեղմացման և այլ առումներով[1]:

---

[31] Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության եվ օգտագործման բնագավառներում ռազմավարություն, 2015թ.:

Էկոհամակարգային ծառայությունները հիմնականում ունեն **ապահովող** (օր.՝ սնունդ, մաքուր ջուր և թարմ օդ, վառելիք), **կարգավորիչ** (օր.՝ կլիմա, բնական աղետների, համաճարակների և էրոզիայի կանխում, կենսամիջավայր), **աջակցող** (հողագոյացում, ֆոտոսինթեզ, ազոտի, ածխածնի, թթվածնի, ջրի շրջանառություն) և **մշակութային** (օր.՝ գեղագիտական, կրոնական, գիտաճանաչողական, սոցիալական և հոգևոր արժեքներ, ավանդույթների ձևավորում, ռեկրեացիոն ռեսուրսներ) նշանակություն: Վերոնշյալ ԿՌԳԾ-ն նախատեսվել էր 2000-2004 թվականների համար: Սակայն, հետագայում, ի թիվս այլ փոփոխությունների, զգալի փոփոխություններ են արձանագրվել կենսաբազմազանությանն առնչվող օրենսդրության կատարելագործման և ինստիտուցիոնալ համակարգի հզորացման ուղղություններով:

2010 թ.-ին Նագոյայում (Ճապոնիա) Կոնվենցիայի կողմ երկրների 10-րդ նստաշրջանի կողմից ընդունվել է *2011-2020 թվականների համար Կոնվենցիայի կենսաբազմազանության ռազմավարական պլանը*և *Այիչիի կենսաբազմազանության թիրախները*: Այդ փաստաթղթում նշվում է. «Հայաստանի Հանրապետության բնակչության բարեկեցությունը մեծապես կախված է կենսաբանական պաշարների առկայությունից, որոնք, ինչպես ստորգետնյա պաշարները, երկրի համար հանդիսանում են ռազմավարական ռեսուրսներ»: Դրանից բացի, փաստաթղթում ներկայացված են Հայաստանի Հանրապետության՝ որպես սննդամթերք օգտագործվող ֆլորայի և մակրոսնկերի օգտակար տեսակները հետևյալ խմբերով՝

ա) ուտելի խոտաբույսեր՝ շուրջ 200 տեսակ.

բ) վայրի պտղահատապտղատուներ՝ շուրջ 120 տեսակ (կազմում է Հայաստանի դենդրոֆլորայի մոտավորապես 40%-ը).

գ) մեղրատու բույսեր՝ շուրջ 350 տեսակ. և

դ) ուտելի սնկեր՝ 290 տեսակ:

Հայաստանի կենսաբազմազանության վիճակի վրա բացասացաբար ազդող բազմաթիվ գործոններից մեկը համարվում է կենսաբանական պաշարների (այդ թվում՝ տնտեսապես բարձրարժեք, հազվագյուտ և անհետացման վտանգի տակ գտնվող տեսակների) գերօգտագործումը[1]: Հայաստանի Հանրապետության՝ կենսաբազմազանությանն առնչվող կարգավորումների հետագա ամրապնդման մասով պարտավորությունները վերահաստատվել են «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի իրականացման Հայաստանի Հանրապետություն վեցերորդ

ազգային զեկույցում[32]: Այս միջազգային պարտավորությունների կատարումը, անշուշտ, նպաստում է շրջակա միջավայրի և կենսաբազմազանության արդյունավետ պահպանությանը:

2010թ.-ին իրականացված՝ կենսաբազմազանության ռեսուրսների և համապատասխան բիզնես գործելակերպերի վրա հիմնված արժեշղթաների մասով իրավական և ինստիտուցիոնալ համակարգերի ուսումնասիրությունը կարգավորման ենթակա բազմաթիվ հակասություններ և չկարգավորված մեխանիզմներ ի հայտ բերեց[33]: Այս ուսումնասիրության նպատակն էր վերլուծել հետևյալը.

ա) կենսաբազմազանության ռեսուրսների հիման վրա արժեշղթաների ձևավորմանն առնչվող՝ քաղաքական, իրավական և ինստիտուցիոնալ գործող համակարգերը Հայաստանում.

բ) առևտրային նպատակներով կենսաբազմազանության պաշարների օգտագործումը (օր.՝ վայրի բույսերի հավաքը) կարգավորող՝ գործող ոչ ֆորմալ գործելակերպերը.

գ) ֆինանսական (գործառնական) ծախսերը (գումար, ժամանակ և այլն)՝ տարատեսակ թույլտվություններին, արտոնագրային վճարներին և այլնին առնչվող տարբեր ձևաթղթեր և դիմումներ ներկայացնելու շղթայի հետ միասին.

դ) կենսաբազմազանության պաշարների վրա հիմնված վերջնական արտադրանքի արտահանման (ներմուծման) վերաբերյալ համապատասխան կարգավորումները. և

ե) համապատասխան քաղաքական և իրավական համակարգերում գոյություն ունեցող սահմանափակումներն ու բացերը[3]:

Սույն վերլուծության եզրահանգումներից մեկը Հայաստանի Հանրապետությունում վայրի բույսերի հավաքման հավաստագրեր տրամադրող՝ մեկ միասնական պաշտոնական մարմնի բացակայությունն էր, ինչը պայմանավորված էր այս հարցի վերաբերյալ համապատասխան իրավական ակտերի բացակայությամբ[3]: Այլ կերպ ասած, Հայաստանում վայրի բույսերի հավաքը հավաստող որևէ իրավական հիմք գոյություն չուներ: Իրավական և օրինաստեղծ գործունեության հիման վրա, ինչպես նաև

---

[32] «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի իրականացման Հայաստանի Հանրապետություն վեցերորդ ազգային զեկույց, 2019թ.:

[33] «Կենսաբազմազանության ռեսուրսների և համապատասխան բիզնես գործելակերպերի վրա հիմնված արժեշղթաների մասով իրավական և ինստիտուցիոնալ համակարգերի վերլուծություն», 2010թ.:

կարգավորող մեխանիզմների պարզաբանումից հետո 2010 թ.-ի ուսումնասիրությամբ առաջարկվեց քննարկել և հստակեցնել հաստատություններին վերաբերող խրթին հարցը: Քանի որ այդ վերլուծությունը գլխավորապես կենտրոնացած էր գնումների գործընթացի վրա, առաջարկվող լուծումներից մեկը մասնագետներից, իրավաբաններից և այլ շահագրգիռ կողմերից (որոնք գործնականում իրականացնում են կամ պատրաստվում են իրականացնել համապատասխան գործունեություն) բաղկացած աշխատանքային խմբի ձևավորումն էր՝ գործող օրենսդրությունում անհրաժեշտ փոփոխությունները քննարկելու և դրանք համապատասխան իրավական ակտերի նախագծերի տեսքով մշակելու նպատակով, ինչի արդյունքում կկարգավորվեին գնումների, ստանդարտացման, արտահանման և ներմուծման գործընթացները: Հիմնվելով նույն սկզբունքների վրա՝ առաջարկվել է ձևավորել նաև մեկ այլ աշխատանքային խումբ, որը կապահովեր որոշակի տեսակների ու տարածքների պաշտպանության իրավական մեխանիզմների իրականացումը: Դրանից բացի, ուսումնասիրության արդյունքում, որպես հաստատություններին առնչվող խնդրի լուծում, առաջարկվել է գործող հաստատությունների գործառույթների հստակեցում կամ վերջիններիս նոր գործառույթների վերապահում կամ, որպես այլընտրանք, նոր կառույցների (հաստատությունների) ստեղծում[3]: Այս դիտարկումները, անկասկած, զգալի նշանակություն կունենան սույն նախագծի ավարտին գործողությունների ծրագրի մշակման հարցում:

Հայաստանը, որպես Հարավային Կովկասի տարածաշրջանի մաս, համարվում է մշակովի բույսերի, մասնավորապես՝ հացահատիկների և մրգատու մշակաբույսերի ստացման կենտրոններից մեկը: Մշակաբույսերի և վայրի ուտելի բույսերի տոհմական սորտերը ոչ միայն բույսերի կարևոր գենետիկական ռեսուրսներ են հանդիսանում սննդի և գյուղատնտեսության համար, այլև նպաստում տնտեսական աճին, պարենային անվտանգությանն ու պարենային անկախությանը[34]: Տարածաշրջանի առևտուրն ու տեղական բերքահավաքը ներառում է տեսակների լայն շրջանակ, այդ թվում՝ էնդեմիկ բույսերի տեսակներ: Վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների օրինական և ապօրինի առևտրի, ինչպես նաև վերջինիս՝ կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցության գնահատման նպատակով «Ֆաունա և Ֆլորա Ինթերնեշնլ» ՀԿ-ի կողմից

[34] «Հայաստանում բույսերի գենետիկական ռեսուրսների վիճակի մասին ազգային զեկույց», ՊԳԿ երկրի մասին զեկույց, 2008թ.:

իրականացված հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ կենդանական ու բուսական աշխարհի տեսակների առևտուրը տեղի է ունենում Կառավարության պաշտոնական կարգավորման ու կառավարման շրջանակներից դուրս, ինչը զգալի վտանգ է ներկայացնում տնտեսությանը, շրջակա միջավայրին, ինչպես նաև անվտանգությանը[35]: Գրականության և օրենսդրության ուսումնասիրությունից զատ՝ հետազոտությունը ներառել է փողոցային շուկաների դիտարկում, հարցազրույցներ և դաշտային ուսումնասիրություններ: Վայրի բույսերի հավաքի մասով ուսումնասիրությունները իրականացվել են Հարավային Հայաստանի լեռնային շրջաններում՝ ներառյալ Արարատի, Վայոց ձորի մարզերում[5]: Պարզվել է, որ ուսումնասիրված տարածքներում բույսերի ավելի քան 100 տեսակ, այդ թվում՝ դեղաբույսեր, գեղազարդ և ուտելի բույսեր (հազրեվարդ, կատվախոտ, ժենշեն և մատուտակ) կանոնավոր կերպով հավաքվում են համայնքի բնակչության կողմից, ընդ որում՝ դրանց մեծ մասը հավաքվում է արմատներով և պատրաստվում շուկաների համար: Շրջակա միջավայրի նախարարության կողմից կատարված հարցման արդյունքում պարզ է դարձել, որ այս գործարքների մասով որևէ պաշտոնական արձանագրություններ չկան. զեկույցի հրատարակման ժամանակահատվածում Հայաստանում դեղաբույսերի և ուտելի բույսերի առևտրի կամ օգտագործման պաշտոնական մշտադիտարկումների արդյունքում ստացված տվյալներ չեն եղել[5]:

Հայաստանի կլիմայական պայմաններն ու Հայաստանի հեռավոր շրջանների, հատկապես՝ Տավուշի, Լոռու և Սյունիքի մարզերի չվնասված միջավայրը դրական ազդեցություն են ունենում անտառներից հավաքված բուսական հումքի որակի վրա՝ բարձրացնելով այդ արտադրանքի պահանջարկը և՛ տեղական, և՛ միջազգային շուկաներում[36]: Բնությանն ապավինելը, էկոլոգիական գիտելիքների փոխանցումը՝ որպես ավանդական կենսաոճի պահպանման միջոց, ինչը հաճախ անվանում են «կանաչ մտածողություն», խոր արմատներ ունի Հայաստանի բազմաթիվ էթնիկ խմբերի շրջանում

[35] Ա.Մկրտչյան և այլք. «Հայաստանում վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների առևտրի գնահատում՝ միջամտությունների վերաբերյալ առաջարկություններով», Վերջնական զեկույց, 2015-2016թթ.:

[36] «Վայրի հավաքի արժեշղթայի վերլուծություն, Հայաստան» (Համաշխարհային բանկի խմբի զեկույց, 2016թ.)

և Մեծ Կովկասի տարածաշրջանում[37], այսպիսով վայրի բնության ռեսուրսների հավաքն ու օգտագործումը Հայաստանում նոր սովորույթ չէ:

Կարևոր է նաև գիտակցել և շեշտել հայ կանանց գերիշխող դերն այդ ավանդույթների պահպանման հարցում, ինչը ներառում է հույսը վայրի հավաքի վրա դնելը՝ տնտեսական պատճառների բերումով: Վայրի բնության ռեսուրսների հավաքի գործընթացում ավանդաբար ընդգրկվում են գյուղական տնային տնտեսությունները: Ե՛վ խոտաբույսերի, և՛ հատապտուղների արժեշղթայի մասով հիմնական դերակատարներն են հավաքողները (գերակշռող մասը՝ կանայք), միջնորդները, վերամշակող գործարանները և բաշխման կենտրոնները: Վայրի հավաքի ոլորտի արժեշղթայի վերլուծությունը ցույց է տվել, որ արժեշղթայի բոլոր հատվածներում կանայք ունեն միջինից բարձր ներկայացուցվածություն՝ հավաքից և վերամշակումից սկսած, մինչև իրացման վերջնական փուլ, բացառություն է կազմում փոխադրումը[6]: Սովորաբար հավաքող-վերամշակող հարաբերությունները կարգավորվում են բանավոր համաձայնությունների հիման վրա: Տարբեր շահագրգիռ կողմերի միջև գոյություն ունեցող համագործակցության, ինչպես նաև արժեշղթաների տարբեր փուլերում գենդերային հարցերի բացահայտումն անցյալում իրականացված մի քանի ուսումնասիրությունների հիմնական առարկան է եղել[3] [38] [9]: Հայաստանի կառավարությունը վայրի հավաքի արժեշղթան որպես կարևոր ոլորտ է սահմանել՝ աղքատության նվազեցման, ինչպես նաև սոցիալական և բնապահպանական կայուն զարգացում ապահովելու նպատակով, ինչն իր հերթին կխթաներ կանանց տնտեսական հզորացումն ու գենդերային հավասարությունը[39]: 2018թ.-ին Հայաստանում կենսաբազմազանության ընտրված ռեսուրսների արժեշղթայում ներգրավված մշակողների և առևտուր իրականացնողների վերաբերյալ մեկ այլ հետազոտության կարևոր ընդհանուր արդյունքներից պարզ դարձավ հետևյալը.

ա) շուկայական պահանջարկը և իրացման հնարավորությունները՝ որպես հավաքողների, մեծածախ գնորդների (միջնորդների) և վերամշակողների գլխավոր խնդիր.

---

[37] Ն.Ստեփանյան-Ղանդիլյան, «Կանաչ մտածողության ավանդույթները եզդիական (քրդական) մշակույթում», 2015թ

[38] Վայրի հավաքի արժեշղթայի գնահատման զեկույց Հայաստան, ԱՀԿՄԿ, 2018թ.

[39] Գ. Մկրտչյան, «Հայկական գենդերային նախագիծ. Կանանց բիզնես ասոցիացիան երկխոսություն է վարում պետական և մասնավոր հատվածների միջև», 2017թ.

բ) շուկայի վերաբերյալ գիտելիքների և երաշխիքների հրատապ անհրաժեշտությունը.

և ամենակարևորը՝

գ) հարակայունությանն առնչվող խնդիրներների նկատմամբ հատուկ ուշադրության կարիքը[40]:

Հետազոտությամբ կարևորվում է կոնկրետ խոտաբույսեր հավաքողների համար նախատեսված՝ հավաքի գործընթացների վերաբերյալ հիմնական դասընթացների անհրաժեշտությունը, քանզի ներկայիս հավաքի գործընթացների արդյունքում բույսերը հաճախ վնասվում են, իսկ շուկայական պահանջարկը բավարարելու նպատակով դրանց օգտագործման ընդլայնումը բացասաբար կանդրադառնա շրջակա միջավայրի, ինչպես նաև կենսաբազմազանությունը պաշտպանելու Կառավարության ստանձնած պարտավորության վրա[10]:

Հայաստանում վայրի բույսերը գլխավորապես օգտագործվում են երեք նպատակով՝ բժշկական, խոհարարական և առևտրային:

Հավաքը մասնավորապես լայն տարածում ունի Արարատի և Վայոց ձորի մարզերում: «Ֆաունա և Ֆլորա Ինթերնեշնլ» ՀԿ-ի կողմից իրականացված դաշտային հետազոտությունների վերլուծությունները ցույց տվեցին, որ այս մարզերում կանոնավոր կերպով հավաքվում է շուրջ 100 տեսակ, որոնցից 45-ը՝ դեղաբույսեր, 45-ը՝ ուտելի և 19-ը՝ դեկորատիվ բույսեր են: Տեղական շուկաները բավականին փոքր են. բույսերը հիմնականում հավաքվում են գետնի մակերեսից՝ գարնան ժամանակահատվածում, և որպես այդպիսին՝ վերջինս կենսաբազմազանության համար սպառնալիք չի համարվում, քանի դեռ դա արվում է անձնական օգտագործման կամ տեղական առևտուր իրականացնելու նպատակով[5]: Ի տարբերություն վերոնշյալի՝ որոշ բույսերի (օրինակ՝ մատուտակ (*Glycyrrhiza glabra*)) ոչ հարակայուն և մեծ քանակությամբ բերքահավաքը, ինչպես նաև վայրի բույսերը արմատներով հավաքելու դեպքերը որոշակի վտանգներ են պարունակում: Լեռնային գոտիներից վայրի սխտորի հավաքի և արտահանման վերաբերյալ որոշ ոչ պաշտոնական արձանագրումներից կարելի է ենթադրել, որ դրանք միտված են եղել արտահանմանը, անձնական օգտագործմանը և ոչ թե արդյունաբերական կարիքների բավարարմանը, քանի որ դրանց վերաբերյալ

[40] Հայաստանում կենսաբազմազանության ընտրված ռեսուրսների արժեշղթայում ներգրավված մշակողների և առևտուր իրականացնողների հետազոտություն, 2010թ.

պաշտոնական արձանագրություններ չկան[5]: Վայրի բույսերի հարակայուն օգտագործման և դրանց հավաքի կառավարման հարցին անդրադարձ է կատարվել ԱՀԿՄԿ-ի կողմից 2018թ.-ին պատրաստված՝ Վայրի հավաքի արժեշղթայի գնահատման զեկույցում տեղ գտած հետևյալ առաջարկություններում.

ա) անտառածածկ գոտիների մերձակա շրջաններում իրականացվող՝ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված լայնածավալ արշավներ.

բ) տեղական ՀԿ-ների և մարզային իշխանությունների ներգրավման մակարդակի բարձրացում.

գ) կենսաբազմազանության ռեսուրսների նկատմամբ պատշաճ վերաբերմունքի առավելությունների ընդգծում. և

դ) կենսաբազմազանության ռեսուրսների ավելի լայն ընդգրկույթով հավաք՝ հավաքների հարակայունությունն ապահովելու նպատակով[10]: Հարակայունության առումով հավասարապես կարևոր են ինչպես հավաքի գոտիների հետագծելիության բարելավումը, այնպես էլ հավաքի գոտիների համապատասխանելիությունը օրգանական հավաստագրման պահանջներին, ինչի արդյունքում անկասկած կբարելավի Հայաստանի կենսաբազմազանության ռեսուրսների արտահանման ներուժը[41]:

Կարևոր է նշել, որ չնայած Հայաստանի մարզերը հարուստ են խոտաբույսերի և հատապտուղների բավականին մեծ տեսականիով, այդ ներուժն ամբողջությամբ բացահայտված չէ: Ըստ պատմական տվյալների՝ տարբեր նպատակներով օգտագործվել են մոտ 2000 տեսակներ (Հայաստանի ամբողջ բուսական աշխարհի մոտավորապես 60%-ը), մինչդեռ, ինչպես նախկինում նշվել է, ներկայումս այս կամ այն եղանակով առևտրային նպատակներով օգտագործվում են 100-ից քիչ տեսակներ[10]: Ավելին, արժեշղթայում ներգրավված մշակողների և առևտուր իրականացնողների հետազոտության ընթացքում կատարված հարցման մասնակիցների նշած ռեսուրսների ցանկը գլխավորում էին յոթ տեսակ, այն է՝ մոշ, կերբելուկ, մասուր, ուրց, ընկույզ, հոն և վայրի խնձոր ու տանձ, չնայած կենսաբազմազանության մոտ ևս 30 ռեսուրս նշվել էր որպես օգտագործվող (այն է՝ հավաք, առևտուր, վերամշակում), հատապտուղների 15 տեսակ, սնկերի 3 տեսակ, եթերային յուղեր պարունակող բույսերի 4 տեսակ, 8-10 դեղաբույս[5]:

---

[41] «Վայրի բույսերի նմուշառում – զեկույց» (ԳՄՀԸ նախագիծ, 2011թ.)

Կենսաբազմազանության ռեսուրսների լայն տեսականուց չօգտվելու պատճառները ներառում են հետևյալի բացակայությունը.

ա) հասանելի բնական ռեսուրսների և հավաքածուների հաշվառում.

բ)հավաքողների շրջանում մարզում հասանելի վայրի բույսերի վերաբերյալ իրազեկվածություն.

գ) նյութատեխնիկական գործընթացները կազմակերպելու նպատակով արտադրական տարածքից տրամադրվող տեխնիկական աջակցություն.

դ) վայրի բույսերի մասով շուկայական պահանջարկի վերաբերյալ տեղեկություններ. և

ե) պետական աջակցություն[8]:

Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության եվ օգտագործման բնագավառներում 2016-2020 թվականների գործողությունների ազգային ծրագիրը հավանության է արժանացել և դրանում թվարկված են գործողությունները, նպատակները, կատարողները, կատարման ժամկետները, ֆինանսական աղբյուրները և ակնկալվող արդյունքները: Գլխավոր կատարողներն են Կառավարության այնպիսի մարմիններ, ինչպիսիք են Շրջակա միջավայրի նախարարությունը, Գյուղատնտեսության նախարարությունը (ներկայումս Էկոնոմիկայի նախարարության կազմում), Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ու Արտակարգ իրավիճակների նախարարությունները, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ինչպես նաև գիտակրթական հաստատություններ, այդ թվում՝ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան և Հայաստանի ազգային ագրարային համալսարանը (երկուսի դեպքում էլ՝ ըստ համաձայնագրի)[1]: Հայաստանում վայրի հավաքի համար նախատեսված՝ շրջակա միջավայրի կարգավորումների համաձայն՝ վայրի խոտաբույսերի, հատապտուղների և մրգերի հավաքումը դասակարգվում է որպես կողմնակի անտառօգտագործում, և գործում են բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագներ («Հայանտառ» ՊՈԱԿ, Անտառային ոլորտը կարգավորող ակտեր)[8]: Այնուամենայնիվ, չնայած ավելի վաղ՝ 2010 թվականին իրականացված երկու հետազոտություններում ներկայացված առաջարկություններին և իրավաբանական ու ֆիզիկական անձանց նկատմամբ կարգավորումների կիրառմանը, բնապահպանական

իրավախախտումները, ոչ հարակայուն վայրի բերքահավաքի գործելակերպերը, ինչպես նաև վերահսկողության հետ կապված խնդիրները դեռևս լուրջ խոչընդոտներ են համարվում Կառավարության՝ Հայաստանում վայրի բույսերի կանոնակարգված հավաքը կառավարելուն ուղղված ջանքերի համար[8]:

Այնպիսի երկարաժամկետ նախագծերը, ինչպիսիք են Համաշխարհային բանկի խմբի «Գենդերային նախագիծ - Հայաստան»-ը, նպատակ ունեն աջակցելու վայրի հավաքի ոլորտում ընդգրկված կանանց՝ արտադրողականության մակարդակի բարձրացման, աղքատության նվազեցման և տնտեսական աճի միջոցով[42]: Պետք է քաջալերվի կին հավաքողների համար նախատեսված՝ շրջակա միջավայրի համար անվնաս բերքահավաքի գործելակերպերի վերաբերյալ դասընթացների իրականացումը: Օրգանական գյուղատնտեսության շարժման միջազգային ֆեդերացիայի (ՕԳՇՄՖ) կողմից առաջարկվող՝ բերքահավաքի լավագույն գործելակերպերի կիրառումը, ինչը միտված է հատկապես որպես դեղամիջոց օգտագործվող բուսական հումքի ստանդարտացմանը, անկասկած կբարձրացնի այս ոլորտի արտադրատեսակների արժեքը[43]: Հավաքողների շրջանում, ինչպես նաև արժեշղթայի շրջանակներում ավելի լավ համագործակցության արդյունքում կբարելավվի վայրի բնությունից հավաքվող բուսական հումքի դիվերսիֆիկացումը՝ հավաքումների հարակայությունն ապահովելու նպատակով: Այս ոլորտի գլխավոր խնդիրներից մեկը հավաքողների մակարդակում որակի և քանակի առումով շուկայական պահանջարկի վերաբերյալ իրազեկվածության բացակայությունն է: Վայրի բույսեր հավաքողները հաճախակի դժվարությունների են բախվում հավաքված արտադրանքի իրացման հետ կապված կամ չեն կարողանում իրենց կարողությունների առավելագույն չափով հավաք իրականացնել: Առաջարկի և պահանջարկի հավասարակշռվածության խնդրի լուծումը պահանջում է ամբողջական մոտեցում, իսկ վերջինս կարելի է ապահովել դասընթացների միջոցով՝ նախատեսված հատկապես կին հավաքողների համար, որոնք որոշ մարզերում գերիշխող դիրք են զբաղեցնում արժեշղթայի նշյալ հատվածում (օր.՝ Արարատի մարզում՝ 90%-ից բարձր, Վայոց ձորի մարզում՝ 50%-ից բարձր):

[42] Գ. Մկրտչյան, «Հայաստանի գենդերային նախագիծ», Տեղեկատվական թերթիկ (2017թ.)
[43] Ք.Բաշեր, «Դեղաբույսերի և անուշաբույր բույսերի հարակայուն վայրի բերքահավաք. կրթական մոտեցում. փաստաթուղթ», 2000թ.

Մարզերում վայրի հավաքի ոլորտն ակտիվացնելու հարցում[12] մեծ դերակատարություն կունենա կին հավաքողների աշխատանքների կազմակերպումը, կին ձեռնարկատերերի շրջանում հմտությունների շարունակաբար կատարելագործումը, ինչպես նաև տեղական և միջազգային ՀԿ-ների աջակցությամբ գնորդների և արտադրողների հետ առավել ամուր կապեր խթանելու շնորհիվ կանանց համար շուկայի հասանելիության մակարդակի բարձրացումը: 2018 թ.-ի վերլուծության մաս կազմող աշխատաժողովների ու հարցազրույցների արդյունքում վերահաստատվեց վայրի հավաքի ոլորտի կանոնակարգվածության ցածր մակարդակը, ինչպես և նշվել է նախկինում[8]: Չնայած բնապահպանական վճարները հստակ սահմանվում են օրենսդրական կարգավորումներով, վճարման ընթացակարգը և կարգավորող մարմինը հստակ սահմանված չեն, ինչը հանգեցնում է սահմանված վճարների ոչ նպատակահարմար լինելուն:

2018 թվականի ծավալուն հետազոտությամբ ներկայացված առաջարկությունների շարքում էին վայրի բնության ոլորտի կարգավորումների մասով աջակցությունը, վճարների կատարման մեխանիզմների բարելավումը, հատկապես կին հավաքողների շրջանում սոցիալական ձեռնարկատիրությունը քաջալերելը, շահագրգիռ կողմերի լայն շրջանակների ներգրավվածությունը մեծացնելու նպատակով փորձի փոխանակմանն ուղղված աշխատաժողովներ կազմակերպելը, արտադրատեսակների այլընտրանքային արժեշղթաների զարգացմանն աջակցելը (օր.՝ եթերայուղերի ստացում խոտաբույսերի ցողունից կամ հատապտուղների սերմերից և պտուղներից, որոնք սովորաբար դեն են նետվում), աճող և շուկայում պահանջարկ ունեցող վայրի բույսերի և հատապտուղների տեսականու և բազմազանության վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունն ապահովելը, ինչպես նաև Հայաստանի կենսաբազմազանության վերաբերյալ հետազոտությունների իրականացմումը խթանելը (ինչպիսիք են Հայաստանի մարզերում վայրի բույսերի և բնության արտադրողականության՝ որակի և քանակի մասով հաշվառումը, որը մասնավորապես իրականացվում է արտադրողների (վերամշակողների) կամ ՀԿ-ների կողմից):

Մինչ օրս լուրջ խոչընդոտներ են համարվում.

- կենսաբազմազանության ռեսուրսների հավաքը, որը հաճախ իրականացվում է ինքնակամ եղանակով և հաճախ առանց արտոնագրի (թույլտվության) և բնության օգտագործման (բնապահպանական) վճարների.

- լիազորված պետական մարմինների պատշաճ վերահսկողության բացակայությունը (ինչ վճարներ են գանձվում և ինչպես).
- վայրի հավաքի արտոնագրի (թույլտվության) բացակայությունը, ինչը խնդիրներ է առաջացնում արտադրանքի արտահանման ժամանակ այն դեպքում, երբ պահանջվում է ներկայացնել վայրի հավաքման հավաստագիր, ինչպես նաև հարկերի վճարմանն առնչվող հարցեր.
- կիրառվող հարկերի չափը, ինչպես նաև այն, թե որ պետական մարմինը (կազմակերպությունը) հարկեր գանձելու իրավասություն ունի[3, 8]:

Բազմաթիվ շահագրգիռ կողմերի գործողությունների հետևանքով բնական ռեսուրսների գերօգտագործումը զգալի բացասական ազդեցություն է ունենում ոչ միայն Հայաստանի, այլև ողջ Հարավային Կովկասի կենսաբազմազանության վրա, ինչը, չնայած կենսաբազմազանության գործող ռազմավարություններին և գործողությունների ծրագրերին, լուրջ մարտահրավեր է Կառավարության՝ պահպանությանն ուղղված ջանքերի համար և կարող է հաղթահարվել միայն այս ոլորտի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող տարատեսակ սուբյեկտների՝ ներառյալ բիզնեսների, կառավարության մի շարք մարմինների, ինչպես նաև գիտակրթական հաստատությունների համակարգված ներգրավվածության շնորհիվ[44]:

[44] Կենսաբազմազանության համապարփակ կառավարումը Հարավային Կովկասում (ԿՀԿ), Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության ծրագիր (ԳՄՀԸ), 2015

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության եվ օգտագործման բնագավառներում ռազմավարություն, 2015թ
2. «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի իրականացման Հայաստանի Հանրապետություն վեցերորդ ազգային զեկույց, 2019թ.
3. «Կենսաբազմազանության ռեսուրսների և համապատասխան բիզնես գործելակերպերի վրա հիմնված արժեշղթաների մասով իրավական և ինստիտուցիոնալ համակարգերի վերլուծություն», 2010թ. (ԳՄՀԸ «Կենսաբազմազանության կայուն կառավարում» (ԿԿԿ), Հայաստան ծրագրի շրջանակներում ներկայացվել է R-Insights ՍՊԸ-ի կողմից)
4. «Հայաստանում բույսերի գենետիկական ռեսուրսների վիճակի մասին ազգային զեկույց», ՊԳԿ երկրի մասին զեկույց, 2008թ.
5. **Ա.Մկրտչյան** *և այլք.* «Հայաստանում վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների առևտրի գնահատում՝ միջամտությունների վերաբերյալ առաջարկություններով», Վերջնական զեկույց, 2015-2016թթ. (Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ/«Ֆաունա և Ֆլորա Ինթերնեշնլ»)
6. Վայրի հավաքի արժեշղթայի վերլուծություն, Հայաստան (Համաշխարհային բանկի խմբի զեկույց, 2016թ.)
7. **Ն.Ստեփանյան-Ղանդիլյան**, «Կանաչ մտածողության ավանդույթները եզդիական (քրդական) մշակույթում», 2015թ.
8. Վայրի հավաքի արժեշղթայի գնահատման զեկույց Հայաստան, 2018թ. (Վայրի հավաքի գնահատման զեկույցը կազմվել է Համաշխարհային բանկի խմբի Հայաստանում գենդերային ծրագրի պատվերով, որն իրականացնում է Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC)՝ Ավստրիայի ֆինանսների դաշնային նախարարության և Համաշխարհային բանկի՝ գենդերային հավասարության բազմադոնոր ամպհովանի կառույցի

ֆինանսավորմամբ: Զեկույցը կազմել է Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամը:)

9. **Գ. Մկրտչյան**, «Հայկական գենդերային նախագիծ. Կանանց բիզնես ասոցիացիան երկխոսություն է վարում պետական և մասնավոր հատվածների միջև», 2017թ.
10. Հայաստանում կենսաբազմազանության ընտրված ռեսուրսների արժեշղթայում ներգրավված մշակողների և առևտուր իրականացնողների հետազոտություն, 2010թ. (ԳՄՀԸ «Կենսաբազմազանության կայուն կառավարում» (ԿԿԿ), Հայաստան ծրագրի շրջանակներում ներկայացվել է «ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի» խորհրդատվական ընկերության կողմից)
11. «Վայրի բույսերի նմուշառում – զեկույց» (ԳՄՀԸ նախագիծ, 2011թ.)
12. **Գ. Մկրտչյան**, «Հայաստանի գենդերային նախագիծ», Տեղեկատվական թերթիկ (2017թ.)
13. **Ք.Բաշեր**, «Դեղաբույսերի և անուշաբույր բույսերի հարակայուն վայրի բերքահավաք. կրթական մոտեցում. փաստաթուղթ», 2000թ.
14. Կենսաբազմազանության համապարփակ կառավարումը Հարավային Կովկասում (ԿՀԿ), Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության ծրագիր (ԳՄՀԸ), 2015թ.

Հավելված 3

Աշխատաժողով՝ բազմաշահառու խմբերի մասնակցությամբ

2020 թվականի սեպտեմբերի 16-ին Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնը Հայաստանում վայրի բույսերի հավաքի կարգավորման վերաբերյալ առցանց աշխատաժողով անցկացրեց: Աշխատաժողովին մասնակցեցին պետական գործակալությունների, քաղաքացիական հասարակության, բիզնեսների, միջազգային կազմակերպությունների և ակադեմիական ինստիտուտների ավելի քան 40 ներկայացուցիչներ:

Աշխատաժողովի ընթացքում շահառուները քննարկեցին, թե ինչպես կարելի է կարգավորել վայրի բույսերի հավաքը Հայաստանում՝ գյուղական բնակչության տնտեսական և պարենային ապահովության քաղաքականության երկակի նպատակներին հասնելու համար՝ միաժամանակ պահպանելով երկրի բույսերի հարուստ կենսաբազմազանությունը:

Աշխատաժողովի մասնակիցները քննարկեցին համայնքների ներգրավման բարելավման ուղղությունները, պետություն-մասնավոր հատված համագործակցությունը, օրենսդրական փոփոխությունները, մշտադիտարկման և օրենքների կիրառման ավելի լավ մեխանիզմները: Նաև քննարկվեց իրազեկման արշավների կազմակերպումը՝ վայրի բուսերի հավաքի արդյունավետ կարգավորման առումով կառավարության կարողությունները զարգացնելուն նպաստելու նպատակով: Աշխատաժողովի ձայնագրությունը հասանելի է ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի յութուբյան ալիքում՝ հետևյալ հղումով՝ https://youtu.be/byU_vp3XlMM

Աշխատաժողովի մասնակիցների ցանկը

Աղավնի Հարությունյան	ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն
Ալեն Ամիրխանյան	ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն
Ալեքսանդր Առաքելյան	ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն
Կարապետ Գազանճեան	ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն
Գոհար Շահինյան	ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն
Հարություն Ալպետյան	ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն
Հեղինե Գրիգորյան	ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն
Նելլի Կեսոյան	ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն
Նորայլ Բենօհանյան	ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն
Սիրանուշ Հարությունյան	ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն
Տաթև Հարոյան	ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն
Տաթևիկ Վարդանյան	ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն
Վահրամ Էլակեոս	ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն
Ռաֆիկ Սանթրոսյան	Հայաստանի ամերիկյան համալսարան

Կարինե Ջավախյան	Հայաստանի ամերիկյան համալսարան
Հուսիկ Սարգսյան	«Թայմ լենդ» հիմանդրամ, Կալավան
Արամ Աղասյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
Արթուր Ղավալյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
Հակոբ Մաթևոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
Ինեսա Զարգարյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
Մարինա Այդինյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
Ոսկեհատ Գրիգորյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
Տիգրան Թանանյան	Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն
Քրիսթոֆեր Էլլիս	Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն
Վարսիկ Մարտիրոսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Կարեն Էրոյանց	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
Վարդան Թոռչյան	Ավստրիական զարգացման գործակալություն
Հովհաննես Ղազարյան	Փոքր դրամաշնորհային ծրագրեր – Հայաստան (Global Environmental Facility)
Տատյանա Դանիելյան	ՓՄՁ համագործակցության ասոցիացիա ՀԿ
Մարգարիտա Մուրադյան	Դասավանդի՛ր, Հայաստան
Աննա Մանգասարյան	Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (CARD) հիմնադրամ
Սոնա Թելունց	Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (CARD) հիմնադրամ
Թամար Սարգսյան	Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (CARD) հիմնադրամ
Մերի Սահակյան	Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն Հայաստան
Ֆլեող Շիլե	Ֆլորա և ֆաունա միջազգային կազմակերպություն
Արտուշ Խաչատրյան	Համայնքի զարկերակ
Անի Հարությունյան	Հայանտառ ՊՈԱԿ
Հասմիկ Հայրապետյան	Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն, ICARE հիմնադրամ
Լուսինե Թադևոսյան	Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն, ICARE հիմնադրամ
Ռուզաննա Քարտաշյան	ԴԱՐՄԱՆ բուսական թեյեր
Նելլի Դոնոյան	Աժդահակ ՀԿ
Արեգ Գալստյան	Անթառամ
Մարիամ Պողոսյան	Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա